21 ՅՈՒՆՈՒԱՐ 1997, ԵՐԵՔՇԱԲԹԻ #10 (1264)

Azg
Azg
ազգային օրաթերթ

Ալժիր. Ծայրահեղականները շարունակում են այլունռուցս գործողությունները

20 ՀՈՒՆՎԱՐ, RFI: Ալժիրում շարունակվում են իսլամական ծայրահեղականների ահաբեկչական գործողությունները: Անցած շաբաթ-կիրակի օրերը հատկապես մահաբեր էին. 23 մարդ սպանվեց եւ 60-ը՝ վիրավորվեց մայրաքաղաք Ալժիրի ամենամարդաշատ՝ Բելֆուր թաղամասում պայթուցիկով լցված մեքենայի պայթյունի հետեւանքով: Քաղաքական մեկնաբանները շեշտում են ծայրահեղականների՝ ինչքան կարելի է շատ զոհեր առաջացնելու բացահայտ մտադրությունը: Պայթյունը կազմակերպվել էր երեկ երեկոյան Ալժիրի աղքատ, խիտ բնակեցված թաղամասում, երբ փողոցները հատկապես մարդաշատ էին: Մեկ ուրիշ գազանաբարո սպանություն տեղի ունեցավ կիրակի լույս շաբաթ գիշերը Ալժիրից 80 կմ դեպի հարավ-արեւմուտք գտնվող Մեդեա տարածքում: Իսլամական ծայրահեղականների գրոհայինների խումբը տեղի գյուղում պատժիչ գործողություն իրագործեց, որի հետեւանքով 36 մարդ՝ տղամարդիկ, կանայք եւ երեխաներ սպանվեցին, նրանց վզերը կտրվեցին: Ֆրանսիան պարսավեց Ալժիրի ծայրահեղականների այլունալի գործողությունները:

ՄՐՑՊԵՏԱԿԱՆ

Հայաստանը ռուսական գազի փոխադրման տարանցիկ երկիր

Ինչպես հաղորդել էինք նախապես, ՀՀ վարչապետ Արմեն Սարգսյանը հունվարի 17-ին հանդիպեց Ռուսաստանի Դաշնության վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինի հետ: Արդյունքում ձեռք բերվեցին մի շարք կարեւոր համաձայնություններ:

Զրույցի ընթացքում համաձայնություններ ձեռք բերվեցին առեւտրի, արդյունաբերության, ֆինանսների, բանկային ոլորտներում համագործակցությունը խորացնելու վերաբերյալ: Նշվեց, որ երկու երկրներում ստեղծված է համապատասխան օրենսդրական հիմք գործարարների փոխշահավետ համագործակցության համար: Մասնավորապես կարեւորվեց երկու երկրների կապիտալ փոխադարձ հոսքը, ինչպես նաեւ խառը կապիտալով ձեռնարկությունների ստեղծումը: Քննարկվեցին նաեւ էներգետիկայի բնագավառում համագործակցությունն ընդլայնելու հնարավորությունները:

Այդ ամենն իր հաստատումը ստացավ արդեն իսկ հաջորդ օրը, երբ Հայաստանի վարչապետն այցելեց Ռուսաստանի «Գազպրոմ» բաժնետիրական ընկերություն, որն աշխարհի բնական գազի ոլորտներ ունեցող եւ գազ արտահանող խոշորագույն ընկերությունն է: Նա ԱՊՀ երկրներ գազի հիմնական մատակարարն է, տարեկան մոտ 8 մլրդ դոլարի գազ է վաճառում նաեւ Եվրոպային: Վարչապետը հանդիպում ունեցավ «Գազպրոմի» վարչության նախագահ Ռեմ Վյախիրեւի հետ:

Հանդիպման արդյունքում ստորագրված արձանագրության մեջ պատրաստակամություն հայտնվեց փոխշահավետ համագործակցություն սկսելու բնական գազը Հայաստանի տարածքով երրորդ երկրներ փոխադրելու. Հայաստանի ներքին շուկայում բնական գազի մատակարարման եւ իրացման, ինչպես նաեւ Հայաստանի գազատար համակարգի վերակառուցման եւ ընդլայնման մասին: Ըստ պայմանավորվածության, կողմերը համատեղ կիրականացնեն գազատար համակարգերի եւ ենթակառուցվածքի շահագործումը, նախագծումն ու ֆինանսավորումը ինչպես Հայաստանի տարածքում, այնպես էլ երրորդ երկրներում: Հայաստանն առաջին անգամ դառնում է գազափոխադրման տարանցիկ ճանապարհ, համաձայնություն ձեռք բերվեց փոխշահավետ պայմաններով Հայաստանի տարածքով Թուրքիա գազատար անցկացնել, ինչը հնարավորություն կստեղծի տարեկան առնվազն 3-ից 9 մլրդ խորանարդ մետր գազ: Հայաստանը կաջակցի «Գազպրոմին» գազատարի շինարարության նախագծա-հետախուզական աշխատանքներում: «Գազպրոմը» պարտավորվում է աղահովել Հայաստանի բնական գազի առաքումը ըստ տարեկան կնքվող պայմանագրերի: Հանդիպման արձանագրության մեջ տեղ են գտել նաեւ հեռանկարային համագործակցությանը վերաբերող կետեր:

Տես էջ 2

ԱՄՆ

Երդումից հետո Բիլ Քլինթոնը գնաց պարելու

20 ՀՈՒՆՎԱՐ, VOA, RL: Այսօր երեկոյան Վաշինգտոնում տեղի ունեցավ Մ. Նահանգների նախագահ Քլինթոնի պաշտոնամուտի արարողությունը: Բիլ Քլինթոնից առաջ երդում տվեց փոխնախագահ Ալ Գորը, որից հետո Կոմիտոլիումի ասիճանների վրա Քլինթոնը խոստացավ իր նախագահական պարտականությունները կատարել ազնվորեն եւ հավատարմորեն: Բիլ Քլինթոնին երդվեցրեց Գերագույն դատարանի կոլեգիայի նախագահ Ուիլյամ Ռենկվիստը: Քլինթոնը կոչ արեց ամերիկացիներին հայացքն ուղղել հաջորդ հարյուրամյակի խնդիրներին: Նա ասաց, թե Մ. Նահանգները պետք է ջանքեր թափի, որպեսզի իրենց ծեր ժողովրդավարությունը հավետ երիտասարդ մնա: Բիլ Քլինթոնը ազգային միասնության կոչ արեց եւ ասաց, թե յուրաքանչյուր ամերիկացի պետք է համակվի հանրային միասնության նոր ոգով: Նախագահն ասաց, թե ռասիզմի եւ էքսթրեմիզմի մութ ուժերը շարունակում են դեռ կախված մնալ Մ. Նահանգների եւ աշխարհի շատ երկրների վրա: «Մ. Նահանգները՝ աշխարհի մեծագույն ժողովրդավարությունը, աղագայում իր տեսքից կտանի ժողովրդավարությունների մի ամբողջ աշխարհ», ասաց Բիլ Քլինթոնը եւ խոստացավ, որ կառավարությունը կկատարի իր բոլոր խոստումները եւ կունենա հավասարակշռված բյուջե, որա հետ մենտեղ այնպես լանելով ամերիկացիների բարոյական արժեքները: Պատշոնամուտի դիմումից հետո նախագահ Քլինթոնը կնոջ՝ Հիլարիի հետ գլխավորեց նախագահական շքերթը, որը Փենսիլվանիայի պողոտայով ուղղվեց դեպի Սպիտակ տուն: Հանդիսությունները կավարտվեն տոնական 15 պարահանդեսներով եւ նախագահ Քլինթոնը Հիլարիի հետ կայցելի դրանցից յուրաքանչյուրը: Իսկ Ռուսաստանի ԱԽ-ի նախկին ղեկավար Ալեքսանդր Լեբեդը Վաշինգտոնում այսօր հանդիպում ունեցավ ԱՄՆ-ի 2 սենատորների՝ Ուիլյամ Ռոթի եւ Ռոմերս Սմիթի հետ: Ռոթի օգնականներից մեկը Լեբեդին հանձնեց Քլինթոնի երդման արարողությանը մասնակցելու տոմսը, որը թույլ կտա Լեբեդին մուտք գործել միայն այն հատվածը, որը նախատեսված է տոմսեր ունեցող հասարակության համար: Այս տոմսերն իրենց հարազատներին եւ ընկերներին են բաժանում Կոնգրեսի անդամները:

Վարչապետ Արմեն Սարգսյանը ժամանեց Ստեփանակերտ

Երեկ գիշեր մեր թղթակից Վահրամ Աղաջանյանը Ստեփանակերտից հաղորդեց, որ երեկոյան ժամը 8-ի մոտ ԼՂՀ մայրաքաղաք է ժամանել ՀՀ կառավարական պատվիրակությունը վարչապետ Արմեն Սարգսյանի գլխավորությամբ: Պատվիրակությունը, որի կազմում էին ընդգրկված ՀՀ ազգային անվտանգության եւ ներքին գործերի նախարար Սերժ Սարգսյանը, գյուղատնտեսության նախարար Վլադիմիր Մովսիսյանը, տրանսպորտի եւ ճանապարհաշինության նախարար Հենրիկ Քոչինյանը, Ստեփանակերտի օդակայանում դիմավորվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի, վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի, փոխվարչապետ Ժիրայր Պողոսյանի, պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանի, ներքին գործերի նախարար Կարեն Բաբայանի եւ պաշտոնատար այլ անձանց կողմից:

Մինչ այդ ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից մեր ստացած տվյալներով, վարչապետ Ա. Սարգսյանի մեկօրյա այցի նպատակն է ԼՂՀ տնտեսական վիճակին ծանոթանալը: Ստեփանակերտում ՀՀ վարչապետը հանդիպումներ կունենա երկրի ղեկավարության հետ, որի հետ կքննարկի հարցերի լայն շրջանակ, մասնավորապես դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների ներկա գործընթացը եւ զարգացման հեռանկարները:

Ընդամենը 2 նոր թեմ Ուկրաինա եւ Հյուսիսային Կովկաս

Ի հավելումն հունվարի 17-ի մեր տպածի, որով տեղեկացրել էինք Հայաստանեայց եկեղեցու 3 նոր թեմերի ստեղծման մասին, հրատարակում ենք Մայր աթոռի Դիվանից ստացված եւ «Հայրապետական տեղեկագրում» վերնագրված պաշտոնական հաղորդագրությունը, որից պարզվում է, որ ոչ թե 3, այլ 2 նոր թեմեր են ստեղծվել, մեկը Ուկրաինայում, մյուսը Կովկասում:

Սույն հաղորդագրությամբ հայտնում ենք մեր բարեպաշտ ժողովրդին, որ Ամենայն հայոց կաթողիկոս Նորին սուրբ օծություն Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ հայրապետը, հետ խորհրդակցության Գերագույն հոգեւոր խորհրդի հետ, սույն թվականի 10-12 հունվարի նիստին, ընդառաջելով Ուկրաինայի եւ Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդությունների համայնքային մարմինների դիմումներին, հատուկ կոնդակներով Ցնորհնեց, որ այսուհետեւ այս երկու փոխանորդությունները դառնան ինքնուրույն թեմեր:

Նորին սրբությունը Ուկրաինայի թեմի համար թեմական առաջնորդ նշանակեց գեղարքեպիսկոպոս Տ. Նարան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանին եւ Հարավային Ռուսաստանի (Հյուսիսային Կովկասի շրջանի) թեմի համար թեմական առաջնորդ նշանակեց գեղարքեպիսկոպոս Տ. Եզնիկ ծ. վարդապետ Պետրոսյանին:

Հաջողություն ենք ցանկանում նոր թեմերին եւ թեմական առաջնորդներին եւ բարգավաճում նորահաստատ հոգեւոր եկեղեցական կենտրոններին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ
17 Հունվար, 1997

ՀԱՄԱՌՈՏ

Սոլանա-Պրիմակով՝ խիստ գաղտնի բանակցություններ

20 ՀՈՒՆՎԱՐ, RL: Ռուսաստանի արտգործնախարար Պրիմակովի հետ փակ դռների հետեւում անցկացրած բանակցություններից հետո ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան այսօր թողեց Մոսկվան: 5 ժամ տեւած բանակցությունները ներկայացվեցին որպես հետախուզական բանակցություններ: Հանդիպումից հետո տեղի չունեցավ որեւէ մամլո ասուլիս եւ ոչ մեկ կողմը հանդես չեկավ որեւէ մեկնաբանությամբ: Ինչպես հանդիպումից առաջ: Մոսկվայում ՆԱՏՕ-ի ներկայացուցչական խոսնակներից մեկն ասաց, հանդիպումը նպատակ ուներ մեղմացնել հարաբերությունները Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ: Նախագահ Ելցինի մամլո քարտուղար Յասրժեմբսկին այսօր ավելի ուշ ասաց, թե Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ հետագա բանակցությունները լինելու են դժվարին:

Այսօր Հայաստան կայցելի Եվրահանձնաժողովի պատվիրակությունը

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունվարի 21-25-ը Հայաստան կայցելի Եվրոպական հանձնաժողովի պատվիրակություն: Նրա կազմում են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Բելգիայի միջուկային անվտանգության մասնագետները: Այցելության նպատակն է ծանոթանալ ՀՀ պետաֆոմիսկողության ընթացիկ գործունեությանը եւ RAMG ծրագրի շրջանակներում կազմել հետագա համագործակցության նախագծեր:

ԵԱՀԿ

Ադրբեջանը դեմ է Ֆրանսիայի համանախագահությանը պատճառելով ԱՄՆ-ի թեկնածությունը

Մեր հունվարի 16-ի համարում, հիմնվելով Փաստ լրատվական գործակալության վրա, գրել էինք, որ Հեյդար Ալիեւը փարիզյան իր վերջին այցելության ընթացքում Ֆրանսիայի-պատասխանատուների հետ քննարկել է ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահության հարցը, առանց որեւէ մանրամասնություն հաղորդելու այդ մասին: Երեկ, «Ժամանակ» թերթի միջոցով տեղեկացանք, որ Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը թուրքական «Զաման» թերթին հաղորդել է, որ իր երկրի նախագահը Ֆրանսիայի պատասխանատուների ուշադրությանը «բացահայտորեն» ներկայացրել է Բաքվի դիրքորոշումն այդ կապակցությամբ: Իրենք դեմ են Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժակ Բլոշի համանախագահությանը եւ պատասխանում են Մ. Նահանգների ներկայացուցիչ Ստրոբ Թալբոթի թեկնածությունն այդ պատասխանում: Ալիեւը Ֆրանսիացիներին հիշեցրել է այն պարագան, որ ԵԱՀԿ-ի նախկին շրջանային նախագահ Ֆլավիո Կոտտին Մինսկի խմբի համանախագահ է առաջարկել Ֆրանսիային: Այդպես իրենց կարծիքը հարցնելու:

Հասանովն ասել է նաեւ, որ Բաքուն թիկունք է կանգնում ամերիկյան կողմին, այսինքն Մ. Նահանգների փոխպետքարտուղար Ստրոբ Թալբոթի թեկնածությանը, քանի որ Վաշինգտոնը «ցանկանում է ավելի գործուն դեր ստանձնել հակամարտության կարգավորման գործում»: Նա հայտարարել է նաեւ, որ «Ֆրանսիայի դարաբաղյան հաղթականությունը վերջնականորեն հստակեցված չէ» տակավին:

Ուշագրավ է նաեւ Ադրբեջանի արտգործնախարարի առնվազն արտառոց հայտարարությունը, թե՝ Ռուսաստանի ներկայացուցչի հետ համանախագահի պատասխանում Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժակ Բլոշի թեկնածությունը հաջողեցնելու գործում կարեւոր դեր է կատարել Ֆրանսիայի հայկական հզոր լոբբին, որը, նրա ասելով, «մեծ ազդեցություն կարող է գործել Փարիզի արտաքին քաղաքականության վրա»: Սակայն Հասանովը չի բացատրել, է. թե ինչպես է ֆրանսահայ լոբբին ներազդել ԵԱՀԿ-ի նախագահ Ֆլավիո Կոտտիի որոշման վրա:

Անշուշտ, պարզ է մեզ համար, թե ինչու է Հասանովն այդքան ձեռնարկում ու «ծաղկեցնում» ֆրանսահայ լոբբիի դերը: սկզբից ետք ի նպաստ հայերի կողմնակալ ցույց տալ Ֆրանսիային:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆՎԱՐԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. «Հայությունն իր հավաքական, միասնական եւ հեռեւողական գործողություններով ի զորու է դիմակայելու ամեն մի ոտնձգության, որը կաղառնա մեր ժողովրդի որեւէ հատվածի գոյությանը կամ նրա պատմական տարածքների վերջնական յուրացմանը», ասվում է Բաքվի հայերի նկատմամբ իրականացված զանգվածային բռնություններ-

Բաքվի եւ այլ վայրերի ջարդերն ու տեղահանությունները պարբերաբար դարձնում «անվտանգության երաշխիքներ»

ի եւ ջարդերի զոհերի հիշատակին նվիրված հունվարի 20-ին Երեւանում կայացած խորհրդաժողովում ընդունված հայտարարությունում:

«Բաքվի, ինչպես նաեւ Սումգայիթի, Գանձակի եւ Ադրբեջանի այլ շրջաններում իրականացված հայկական կոտորածներն ու տեղահանությունները Ադրբեջանի իշխանությունների կողմից սանձազերծած արցախյան պատերազմը եւ հատկապես Նախիջեւանի հայաթափման պատմական իրողությունն այսօր անհեթեթ են դարձնում այդ երկրին բռնակցված հայկական որեւէ տարածքի հայության անվտանգության «երաշխիքները» ում կողմից էլ դրանք տվելու լինեն:

Այսօր ակնհայտ է, որ միջազգային հանրությունը, ի դեմս իր կազմակերպությունների, շարունակում է անտեսել պատմական ճշմարտությունը եւ փորձում պարտադրել հայությանը համաձայնելու իր պատմական տարածքի մի մասի՝ Արցախի, նորովի բռնակցմանը այլ երկրի: Նման պայմաններում անհետաձգելի է դառնում համահայկական համաժողովի հրավիրումը: Ուսի խորհրդաժողովը կոչ է անում հայության բոլոր հատվածներին եւ հասարակական, քաղաքական ու պետական կառույցներին իրենց գործնական մասնակցությունը բերել «Ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի հանրապետության» համահայկական համաժողովի հրավիրմանը», նշվում է հայտարարությունում:

Համաժողովի կազմկոմիտեի նախագահ Արամ Սարգսյանի խոսքերով, համաժողովի հիմնական նպատակը պետք է լինի Արցախի վերաբերյալ հայ ժողովրդի միասնական կամքի հայտնումը: Նա նշեց, որ համագործակցության ակնկալիքով իրենք դիմել են ՀՀ վարչապետ Արմեն Սարգսյանին: Ըստ նրա, առաջիկայում նախատեսվում է հրավիրել կլոր սեղան, որի ընթացքում կվերլուծվի անցած ճանապարհը, կգնահատվի Լիսաբոնյան գագաթաժողովից հետո ստեղծված իրավիճակը եւ կորոշվեն հետագա անելիքները: «Արցախի հարցը երբեւէ այսքան վտանգավոր չի եղել, անգամ պատերազմի ժամանակ», ասաց Ա. Սարգսյանը:

«Հանուն մարդկության կայուն զարգացման» ասոցիացիայի նախագահ Կարինե Դանիելյանը կարեւորեց ինֆորմացիայի կոորդինացիոն խորհրդի ստեղծումը, նշելով, որ այս հարցում անհրաժեշտ է ՀՀ իշխանությունների աջակցությունը: Նա Արցախի հարցի շուրջ ստեղծված իրավիճակը բացատրեց Ադրբեջանի իշխանությունների (եւ ոչ միայն իշխանությունների) ակտիվ եւ Հայաստանի իշխանությունների պասիվ քաղաքական աշխատանքով:

ԵԱՀԿ-ի շրջանակներում մարդու իրավունքների հարցերով միջազգային կոնգրեսի համանախագահ Վիտալի Դանիլովի կարծիքով պետք չէ խուսափել ցեղասպանություն բառից եւ հարկ եղած դեպքում հարկավոր է օգտագործել ոչ թե «Բաքվի հայտնի դեպքեր» կամ «տխուր դեպքեր» ձեւակերպումները, այլ «Բաքվի ցեղասպանություն»: «Եթե առաջինը չդատապարտվի, կկրկնվեն նորերը», ասաց Վ. Դանիլովը եւ ավելացրեց, որ «Ադրբեջանին ժողովրդավարական երկիր չի կարելի համարել»:

Կազմկոմիտեի անդամները այցելեցին Շիծեռնակաբերդ եւ ծաղկեղոսակներ դրեցին ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

«31»-Ի ԳՈՐԾ

Վահան Հովհաննիսյանի ցուցմունքները ընդհատվեցին Սուսաննա Մակարյանի բացակայության պատճառով

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. «31»-ի գործով հունվարի 20-ի դատական նիստում ամբաստանյալ Վահան Հովհաննիսյանը շարունակեց իր լրացուցիչ ցուցմունքները: Նա անդրադարձավ «հեղաշրջման» եւ «ահաբեկչական ակտի» նախապատրաստության տարբեր ասպեկտներին: Ըստ նրա, գործում չկան աղացույցներ, որոնք հաստատեին այն փաստը, որ բացի Կարապետ Ղազարյանի տանը «բազավորված» 15-20 հոգուց Հայաստանի տարածքում եղել են նաեւ այլ ուժեր, բազավորման այլ վայրեր: Չի աղացուցվել հեղաշրջման նպատակով մարդ հավաքագրելու վերաբերյալ որոշ ամբաստանյալներին ներկայացված նախքննության մեղադրանքը, ինչպես նաեւ այն, որ գործով առկա զենքը պահվում էր հեղաշրջում կատարելու նպատակով: Նա ընդգծեց, որ քանակապես այն բավարար չէր այդ նպատակին ծառայեցնելու համար:

Ըստ Վ. Հովհաննիսյանի, «բազավորման» մասին նախքննության պնդումները նույնպես զուրկ են հիմքից, առանց ժամադրության, նշանաբանի, հրամանատարի բազավորում չի լինում: Վ. Հովհաննիսյանը դատարանի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ փորձառու մարդիկները «բազավորման» համար ոչ մի դեպքում չէին ընտրի ռազմավարական առումով այդպիսի անհաջող տարբերակ: Բանն այն է, որ Նորագյուղը շատ խիտ բնակեցված գյուղ է, որով անցնում է մեկ ճանապարհ, որը փակելը եւ կարծեցյալ դավադիրներին կալանքի ենթարկելը ոչ մի դժվարություն չէր ներկայացնի: Հարկ է նշել, որ Կ. Ղազարյանի Նորագյուղի տանը անգամ հեռախոս չկար: Գործում ոչ մի վկայություն չկա նաեւ այն մասին, թե ինչ տրանսպորտային միջոցներով էին ամբաստանյալները մտադիր հասնել, մասնավորապես, Նուբարաշենի զորամաս վերջինի վրա հարձակում գործելու նպատակով: Ըստ Վ. Հովհաննիսյանի, անտրամաբանական է, որ նման գործողություն իրականացնելու նպատակ ունեցող անձիք իրենց տրամադրության տակ չունեին ռադիոհաղորդիչներ, կապի այլ միջոցներ:

Գործում բացակայում է նաեւ ենթադրյալ ահաբեկչական ակտի իրականացման պլանը, չի նշված վայրը, ժամանակը եւ այլն: Քննչական խումբը փորձ է արել ահաբեկչական ակտի նախապատրաստությունը կապել ոստիկանների հետ ընդհարումից հետո Սուրենյավանի մերձակա սարերում աղասան գտած խմբի հետ: Սակայն, ինչպես նշեց Վ. Հովհաննիսյանը, այդ պահին «հեղաշրջման» ենթադրյալ ղեկավարները արդեն ձերբակալված էին, արդեն հասարակությանը մատուցվել էր Դաշնակցության ղեկավարությամբ նախապատրաստվող հեղաշրջման գաղափարը:

Վ. Հովհաննիսյանի ցուցմունքները նորից ընդհատվեցին այս անգամ ամբաստանյալ Սուսաննա Մակարյանի բացակայության պատճառով:

Հաջորդ դատական նիստը տեղի կունենա հունվարի 21-ին:

Ստանություն Ոսկեվազ գյուղում

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Հունվարի 18-ին ժամը 18-ի սահմաններում Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղի բնակիչ Արմենակ Հակոբյանն իր համագյուղացի Գեւորգ Կարապետյանի տանը վիճաբանել եւ ատրճանակով վիրավորել է տանտիրոջը, նրա կնոջը, որդուն եւ դստերը:

Նախկինում քրեական օրենսգրքի 99 հոդվածով (դիտավորյալ սպանություն) դատապարտված հանցագործը չի ենթարկվել դեպքի վայր եկած ոստիկանության աշխատակիցներին, դիմադրություն է ցույց տվել եւ հրազենով վիրավորել նաեւ ՆԳԲ քրեական հետախուզության բաժանմունքի պետի տեղակալ Ժ. Հովակիմյանին ու 2 օպերլիազորների: ՆԳ եւ ԱԱ քրեական հետախուզության վարչությունից Արմենպրեսի թղթակցին ասացին, որ բոլոր տուժածների հետ հիվանդանոց է տեղափոխվել նաեւ փոխհրաձգության հետեւանքով վիրավորված հանցագործը, իսկ Գեւորգ Կարապետյանի կինը՝ Օլգա Կարապետյանը հիվանդանոցում մահացել է:

Հրդեհների հասցրած վնասը՝ 200 միլիոն դրամ

Հունվարի 17-ի «Ազգի» համարում տպագրված Փաստ գործակալության «Արձանագրվել է հրդեհի շուրջ 1700 դեպք» լուրի կապակցությամբ երեկ խմբագրություն զանգահարեց հրշեջ ծառայության պետական հսկողության վարչության պետի տեղակալ մայոր Սարգսյանը եւ ճշտեց, որ անցած տարի հրդեհների հետեւանքով հանրապետությանը հասցվել է ոչ թե 20 միլիոն դրամի (ինչպես տպագրվել է), այլ 200 միլիոնի վնաս: Պրն. Սարգսյանը հայտնեց նաեւ, որ զոհերի ընդհանուր թիվը 45 է, որից 14-ը՝ երեխաներ:

Նոյյան տաղան լրատվական-վերլուծական կենտրոնի կոլեկտիվը իր ցավակցությունն է հայտնում կենտրոնի գլխավոր խմբագիր Գայանե Գառնիկի Առաքելյանին, աշխատակից Անահիտ Գառնիկի Առաքելյանին եւ ընտանիքի բոլոր անդամներին սիրելի մոր՝

Ռիտա Հովհաննեսի Ջաղեթյանի

մահվան կապակցությամբ:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Հայաստանը ռուսական գազի փոխադրման տարանցիկ երկիր

Սկիզբ էջ 1

Մասնավորապես, Հայաստանի էներգետիկայի նախարարությունը եւ «Գազպրոմ» ԲԸ-ը համատեղ պետք է մշակեն առաջարկներ՝ Հայաստանի ազգ էներգետիկ հզորություններում ռուսական բնական գազի օգտագործմամբ էլեկտրաէներգիայի արտադրություն կազմակերպելու, այնուհետեւ համատեղ երրորդ երկրներին վաճառելու վերաբերյալ: Ռուսական կողմը նաեւ կգնի Հայաստանի էներգետիկայի նախարարության «Հայգազարդ» ձեռնարկության, ինչպես նաեւ հանրապետության այլ կազմակերպությունների արտադրատեխնիկական ներուժի՝ «Գազպրոմ» ԲԸ գիտատեխնիկական եւ սոցիալական ծրագրերի իրականացմանը մասնակցելու հնարավորությունները:

Հայաստանի կառավարության եւ «Գազպրոմի» միջեւ ստորագրվեց համաձայնագիր «Հայգազարդ» պետական ձեռնարկության եւ «Գազպրոմ» ՈԲԸ մասնակցությամբ Հայաստանում համատեղ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին, որը պետք է իրականացնի արդեն իսկ գործող գազատարի օգտագործումը, գազի փոխադրման նոր հզորությունների ստեղծումը, ինչպես նաեւ հսկողությունը գազի մատակարարման հետ կապված բոլոր խնդիրներում: Որոշում ընդունվեց, որ կողմերը 1997 թ. առաջին եռամսյակում պետք է ստորագրման համար պատրաստեն բաժնետիրական ընկերության հիմնադիր փաստաթղթերը:

Ստորագրված փաստաթղթերի շնորհիվ հայ-ռուսական տնտեսական համագործակցությունը ձեռք է բերում նոր որակ: Հարցի նման լուծումը Հայաստանի համար ունի ոչ միայն տնտեսական, այլ նաեւ ռազմավարական նշանակություն, սա էներգետիկ ճգնաժամը եւ շրջափակումը հաղթահարելու կարեւոր քայլ է:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՍՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Բաբկեն Արարքցյանը առաջարկում է կառավարման մարմինների ծախսերի կրճատում

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ազգային ժողովի հանձնաժողովների հունվարի 20-ի համատեղ նիստում, որը վարում էր ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանը, քննարկվեցին Հայաստանի Հանրապետության 1997 թ. պետական բյուջեով նախատեսված պետական մարմինների ֆինանսավորման հարցերը:

Ֆինանսների նախարարության կողմից ներկայացվեցին պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերը, որոնք նախանշվել են հաշվի առնելով կառավարման համակարգի կառուցվածքը, ընթացիկ տարում գների, սակագների եւ աղաճի կանխատեսվող մակարդակը:

Բյուջետային տարում իշխանության պետական մարմիններին հատկացված գումարը 37 տոկոսով ավելի է 1996 թ. համադասական հատկացումների ծավալից: Աղաստվող կատարողականի նկատմամբ աճը կազմում է 63 տոկոս, ինչը նախ եւ առաջ պայմանավորված է կառուցվածքային փոփոխություններով: Այսպես, սոցիալական աջակցության նախարարության համակարգում ստեղծվել են կենսաթոշակային ապահովության եւ զբաղվածության տարածքային կենտրոններ, ֆինանսների նախարարության շրջանակներում՝ տեղական գանձապետական բաժանմունքներ, իսկ արդարադատության նախարարության համակարգում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններ: Այս եւ մի քանի այլ նախարարությունների համակարգերում կառուցվածքային փոփոխությունների հետեւանքով ավելացել է աշխատողների թվաքանակը:

Պետական բյուջեում նախատեսված են հատկացումներ Երեւանի քաղաքապետարանին եւ մարզպետարաններին:

Հաշվի են առնված նաեւ բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձի բարձրացման ուղղությամբ ծրագրված միջոցառումները:

Ընդհանուր առմամբ, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների հանրապետական եւ տեղական մարմինների պահպանման ծախսերի ծավալը կազմում է 1997 թ. ծախսերի ընդհանուր ծավալի 6,3 տոկոսը:

Նիստում մանրամասնվեցին պետական բյուջեով նախատեսվող ՀՀ Ազգային ժողովի պահպանման ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման, որը կազմում է 0,6 մլրդ դրամ:

Գործադիր իշխանության պահպանման հատկացումները 7,6 մլրդ դրամի չափով են, իսկ դատական իշխանության պահպանման ծախսերը շուրջ 1 մլրդ դրամի չափով:

Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի շուրջ Ազգային ժողովի հանձնաժողովների համատեղ նիստում ծավալվեց շահագրգիռ քննարկում: Խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքցյանի կարծիքով ներկայացված բյուջեի սուղ ֆինանսական միջոցները պարտադրում են կրճատել կառավարման մարմինների ծախսերը: Այս տեսակետը պաշտպանություն գտավ ԱԺ պատգամավորների ելույթներում: Քննարկման արդյունքներով նպատակահարմար գտնվեց օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների պահպանման ծախսերը վերանայելուց հետո, կրկին անդրադառնալ հարցի քննարկմանը:

Հունվարի 21-ին Ազգային ժողովում կշարունակվեն բյուջետային քննարկումները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէն
ՍԱՍՈՒՆ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածք, «Ազգ» թերթի
Ցրումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՄԲԱՑԻԿ

ԼՂՀ

Արցախի թեմ. Ստեղծվեց հայ եկեղեցու քարոզչական կենտրոն

Ամենայն հայոց կաթողիկոսի հրահանգով Արցախի թեմում ստեղծվել է քարոզչական կենտրոն, որ կոչված է քարոզական աշխատանքների իրագործմանը ԼՂՀ-ում: 1997-98 թթ. ուսումնական տարում նախատեսված է ԼՂՀ հանրակրթական դպրոցներում մտցնելու «կրոն» առարկան, որը կդասավանդվի շաբաթական 1 ժամ, 1-ից 10-րդ դասարաններում:

1996 թ. մարդասիրական օգնությունը թվերով

ԼՂՀ էկոնոմիկայի եւ ֆինանսների նախարարության պաշտոնական հաղորդագրության համաձայն, 1996 թ. հունվարից մինչեւ 1997 թ. հունվարի 1-ը մարդասիրական օգնության գծով ստացված գումարներից ԼՂՀ կայացման եւ հզորացման, բնակավայրերի, սոցիալական օբյեկտների եւ տնտեսական վերականգնման, ինչպես նաեւ զոհված ազատամարտիկներին օգնելու նպատակով ծախսված է 451397 ամերիկյան դոլար: Նույն փաստաթղթում նշվում է, որ ԼՂՀ կառավարության որոշման համաձայն, ԼՂՀ կայացման ու հզորացման ծրագրի իրականացման համար ստացված գումարների մնացորդներից 4150 ամերիկյան դոլար տեղափոխված է սոցօբյեկտների վերականգնման ծրագիր:

Նկատելի աճ Լեռնային Ղարաբաղի տնտեսություններում

Անցյալ տարվա դեկտեմբերի դրությամբ ԼՂՀ փայատիրական, վարձակալական, պետական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում կատարվել է 39 հազար 917 հեկտար հերկ, ինչը 26.6 տոկոսով գերազանցում է 1995 թ. մակարդակը: Անցյալ տարի կատարվել է նաեւ 30 հազար 488 հեկտար ցանք: Դա 27,7 տոկոս ավելի է 1995 թ. ցուցանիշից:

ՎԱՀԲԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Քաջարան-Սիսիան գազատարը վերանորոգման կարիք ունի

ԿԱՊԱՆ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ եւ ԻԻՀ միջեւ կնքված պայմանագրի համաձայն, Իրան-Մեղրի-Քաջարան կառուցվելիք գազատարը պետք է միացվի Քաջարան-Կապան-Գորիս-Սիսիան գազատարին: Վերջինս, որը կառուցվել է դեռեւս 1982 թվականին, ենթակվել է կոռոզիայի:

Կապանի գազի ծառայության ինժեներ Համբարձումյանի կարծիքով, եթե խողովակաշարը որեւեն հնարավոր է շուտ չվերանորոգվի, ապա քայքայումը կխորանա, եւ հետագայում գազատարը վերջնական տեսքի բերելու համար ավելի մեծ ծախսեր կպահանջվեն:

ՔԻՇՆԵՎ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ընդունված է, որ հայերը հայրենիքի սահմաններից դուրս եւս ձգտում են բարձր պահել ազգային պատիվն ու արժանապատվությունը: Ավա՜ղ, ինչպես վկայում է Մոլդովայում Արմենպրեսի թղթակիցը, ոչ միշտ:

Մոլդովայում հայ համայնքը գոյություն ունի մի քանի դար, եւ միայն խորհրդային ժամանակներում փաստորեն «չգործեց»: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մոլդավահայերը դարձյալ սկսեցին հավաքվել Քիշնեւի հայկական եկեղեցու մոտ: Մտածում էին վերականգնել համայնքի գործունեությունը: Այս գործում նախաձեռնությունն ստանձնեցին տեղացի ձեռնարկիչներ, կոոպերատիվների տերեր՝ եղբայրներ Արմեն եւ Սիմոն Գուլֆանյանները:

1992 թվականի փետրվարից հայկական վանատան կողայկն սկսեց նոր կյանքով ապրել: Սկսվեց եկեղեցու վերականգնումը, հարող տարածքի բարեկարգումը: Մոլդովայի հայերի ընդհանուր ժողովում ընդունվեց համայնքի կանոնադրություն, իսկ համայնքի նախագահ ընտրվեց Արմեն Գուլֆանյանը: Եղբայրը՝ Սիմոնը, դարձավ փոխնախագահներից մեկը: Այստեղ եկող բոլոր հայերը, իսկ դրանց թիվը փոքր չէ, օգնեցին ով ինչով կարող էր, նվիրատվությունների համար ոչ ոք չզլացավ: Համայնքի անունն ու հաշվարկային հաշիվը օգտագործվեցին նաեւ առեւտրային գործառնությունների համար: Ենթադրվում էր, որ ձեռնարկեց հայերը կզբաղվեն առեւտրով, իսկ եկամուտները կնպաստեն համայնքի եւ եկեղեցու բարգավաճմանը:

Հայկական եկեղեցու հանդիսավոր օծմանը ներկա էին հարյուրավոր ծխականներ, Մոլդովայի Հանրապետության նախագահը, այլ պաշտոնատար անձինք, դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ: Այս իրադարձությունը լայնորեն լուսաբանվեց Մոլդովայի հեռուստատեսությամբ, ռադիոյով, մամուլում:

Եվ ահա սկսվեց առօրյան: Համայնքի խորհրդի նիստերում ժամանակ առ ժամանակ ծագում էր առեւտրային գործունեության հարցը: Սակայն առեւտրային կենտրոնի աշխատանքի արդյունքները չէին հրապարակվում, թեեւ գործում էր համայնքին կից: Դա սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն էր, որի հիմնադիրներն էին Գուլֆանյան եղբայրները: Ամեն անգամ հաշվետվության մասին խոսելիս համայնքի նախագահը խուսափում էր ուղղակի պատասխաններից՝ խոստանալով հրապարակայնորեն հաշվետվություն ներկայացնել ընդհանուր ժողովում, որը, անցնելով առաջ, ասենք, այդպես էլ չկայացավ:

Այնուամենայնիվ, «աղբը տնից չհանվեց», եւ Մոլդովայում հայ համայնքի հեղինակությունը մնում էր շատ բարձր: Հայկական մշակութային կենտրոնի շինարարության համար Քիշնեւի քաղաքապետարանը քաղաքի կենտրոնում տրամադրեց հրաշալի հողամաս, որը հարում է եկեղեցու տարածքին: Համայնքը նույնիսկ ազատվեց պարտադիր վարձակալման վճարից:

Ժամանակի ընթացքում Ա. Գուլֆանյանը լիովին դուրս եկավ համայնքի հսկողությունից: Եկեղեցու տարածքում, որտեղ գտնվում են եղբայրների առեւտրային կառույցների գրասենյակները, սկսեցին կասկածելի անձնավորություններ հայտնվել: Հաճախացան «գողական» լեզվով հնչող խոսակցությունները, եկեղեցում կրճատվեց ծխականների թիվը: Քաղաքապետարանի տրամադրած տարածքում տեր ու տնօրինություն էին անում համայնքի հետ ոչ մի կապ չունեցող մարդիկ: Դա բացատրվում էր նրանով, որ ֆինանսական գործերը վատ են, եւ տարածքը, համայնքի շահերից ելնելով, ժամանակավորապես վարձակալության է տվել:

Գուլֆանյան եղբայրները բուռն ձեռնարկչական գործունեություն ծավալեցին: Հոսեցին շահավետ վարկերը: Գործնական կապեր հաստատվեցին Ռումինիայի եւ հեռավոր արտասահմանի հայերի հետ: Սակայն, ի դառնություն մոլդավացի եւ օտարերկրյա իր բազմաթիվ վարկատուների, Սիմոն Գուլֆանյանը մի օր հանկարծ անհետացավ: Իսկ Արմեն Գուլֆանյանն սկսեց ավելի հազվադեպ երեւալ եկեղեցում՝ դա բացատրելով առողջության վատացմամբ: Մինչդեռ խորհրդի անդամները հավաքվեցին եւ վերջապես նախագահից խստորեն հաշվետվություն պահանջեցին ֆինանսական գործունեության վերաբերյալ: Ա. Գուլֆանյանը խոստացավ

ՔԻՇՆԵՎ

Մոլդովայի հայ համայնքը ստիպված կլինի վերականգնել իր բարի համբավը

շուտով ներկայացնել հաշվետվություն եւ գումարել ընդհանուր ժողով, որն այդպես էլ տեղի չունեցավ... Մոլդովայի հայերի համար ամենեւին էլ ոչ գեղեցիկ մի օր համայնքի տարածքում հայտնվեցին ինչ-որ մարդիկ, որոնք սեփականության իրավունքներ ներկայացրին: Պարզվում է, որ «Լուկոյլ-Մոլդովա» ընկերությունն ունի հայ համայնքի անշարժ գույքի գնման կայքագիր: Գործարքի գումարը կազմում էր շուրջ 150 հազար դոլար: Այդ իրադարձությունների ընթացքում նախագահին ոչ ոք չէր տեսել, տան հեռախոսը լռում էր, քանի որ տանտերը ժամանակին հեռացել էր այնտեղից: Նրա հետ միաժամանակ անհետացան նաեւ համայնքի բոլոր փաստաթղթերը, ընդհուպ նրա անդամների ցուցակները, ինչպես եւ ընդունված է նման դեպքերում, հարուցվեց քրեական գործ: Տարվում է հետաքննություն:

Այս արտակարգ իրադրության մեջ Մոլդովայի հայերն իրենց մեջ ուժ գտան գումարելու ազգային խորհրդաժողով: Ծանր էր ամենքին ի ցույց հանել այդքան ամոթալի վիճակը: Հայերը դարեր ի վեր պատվավոր տեղ են զբաղեցրել մոլդովական հասարակության մեջ: Հայ առեւտրականի կամ վաճառականի խոսքը որեւիցե քաղաքացիի համար չոմնիր: Իսկ այսպես հայերի համայնքը զուգորդվում է ինչ-որ մաֆիական հասկացության հետ, եւ համայնքն ստիպված պետք է լինի վերականգնել իր բարի համբավը...

«Նարինեի» բիզնեսը եւ մանուկների առողջությունը

Եթե անհրաժեշտություն չծագեր ստվելու երեւույթի հետ, ապա այս մասին անշուշտ չէր էլ գրվի:

Հինգ տարի առաջ մեր նորածին երեխայի համար «Նարինեի» մերանը վերցնում էինք հին զոովետ ինստիտուտից, եւ չորս տարի մերանի անհրաժեշտություն չկար: Հիմա անհրաժեշտություն առաջացավ դարձյալ դիմելու «Նարինեի» օգնությանը: Եվ ահա ռադիոյով պատահաբար լսեցինք, այսինքն հասկացվեց այնպես, որ լաբորատորիան տեղափոխվել է նոր հասցե՝ Կորյունի եւ Տերյան փողոցների անկյունում գտնվող նախկին հանրակացարանի շենքը:

«Նարինեն», ինչպես հայտնի է, մանկական արժեքավոր կաթնամթերք է, եւ մի քանի տարի առաջ գրեթե բոլոր մանկական պոլիկլինիկաներում կազմակերպված էր նրա օգտագործումը: Սնունդը տրվում էր ծնողին պատրաստի վիճակում (մերված) եւ անվճար՝ մինչեւ երեխայի մեկ տարեկան հասակը: Այդ սնունդը գտնվում էր կաթի մանրէաբան մասնագետների եւ բժիշկների խիստ հսկողության տակ եւ չափազանց օգտակար կեր էր համարվում հատկապես մանուկների աղիքային խանգարումների դեպքում: Սակայն իրողությունն այսօր ակնհայտորեն փոխվել է: «Նարինեն» նույնպես դուրս է եկել բիզնեսի դաշտ եւ ազատ վաճառվում է, բայց ոչ թե պատրաստի սնունդամթերք, այլ ընդամենը մերանը: Թե ինչպիսի գնային փոփոխություններ է ստացել «Նարինեն» վերջին մի քանի տարում, էական չէ, ասենք միայն, որ ներկայումս արժե 200-250 դրամ, որը ծավալով կազմում է ընդամենը 15 մլ (գրամ), այսինքն մեկ ճաշի գդալ՝ նախատեսված 0.5 լ կաթի համար: Մերանը կենսաբանական ակտիվ ու մաքուր խմորիչ-կոլոնիա է, որը ավելի շատ բուժական նշանակություն ունի եւ պատահաբար պետք է կատարի նախատեսված ֆունկցիան, հակառակ դեպքում մեկ գդալ սովորական մածնի մերանը 250 դրամով վաճառելը անհեթեթություն է:

Ռադիոյի հաղորդումը լսելուց հետո գնացինք նշված հասցեով եւ վճարելով 250 դրամը վերցրինք այդ մերանը, որի հետ լաբորատորիայի աշխատակիցը տվեց նաեւ մեքենագրված բացատրականը մերանի ճիշտ կիրառության մասին: Ինչպես գրված էր բացատրականում, այդ մերանով մերեցինք կաթը եւ ստացանք «Նարինե», որից հետագա օրերին ըստ բացատրականի 4 անգամ (հաջորդաբար փոխանցվող կարգով, ամեն մերվածից մեկ ճաշի գդալ վերցնելով) կարելի էր ստանալ նույն սնունդը: Սակայն ստացած «Նարինեից» վերցրած մերանից այլեւս անհրաժեշտ սնունդը չստացվեց, առհասարակ կաթը չմակարդվեց: Եվ քանի որ առաջին տեղափոխումը արդյունք չտվեց, ուստի ավելորդ է հետագա երեք տեղափոխումների մասին խոսելը: Ստիպված հաջորդ օրը նորից գնացի մերանի ետեւից եւ աշխատակիցներին պատմեցի տեղի ունեցածը: Նրանք պնդեցին, որ մենք ենք սխալ գործում եւ վերստին հրահանգեցին խստորեն պահպանել բացատրականում նշված տեխնոլոգիան: Օգտագործեցինք տնային պայմանների ողջ հնարավորությունները, խստորեն պահպանեցինք տեխնոլոգիան, բայց ով զարմանք՝ դարձյալ նույն պատկերը՝ առաջին տեղափոխության ժամանակ կաթը դարձյալ չմակարդվեց: Երբ երրորդ անգամ գնացի այնտեղ եւ ասացի այստեղ-այստեղ, ինչ-որ բան այնպես չէ, Յուրի Կարապետյանը (ըստ երեւույթին վարիչը) ինձ ուղղակի կոպտորեն դուրս հրավիրեց լաբորատորիայից, իսկ Բաբկեն Անդրեասյանը եւ Ռոզա Մաղոյանը սկսեցին բարոյախոսություն կարդալ իմ գլխին: Ես նրանց խնդրեցի ուշադրություն դարձնել մակարդման ակնհայտ բուլացման փաստի վրա: Փորձեցի բացատրել նաեւ, որ կենսաբանության փորձարարական ընդհանուր մեթոդոլոգիայում գոյություն ունի մի չափազանց կարեւոր սկզբունք՝ «միակ՝ տարբերակման, սկզբունքը-принцип единственного различия», ըստ որի բոլոր պարամետրերը նույնն են, անհայտ է միայն մեկը, որը փորձի միջոցով հետազոտվում է: Այստեղ, իրոք բոլոր պարամետրերը (կաթի ջերմաստիճանը եւ ծավալը, ջերմամեկուսացումը, մերանի քանակը եւ այլն) նույնն էին բացի մերանից: Առաջին անգամ լավ ստացվեց (լաբորատորիայից բերված մերանից), հետո նույն պայմաններում չստացվեց, նշանակում է ստացած «Նարինեից» վերցված մերանը արդեն չի համապատասխանում մանրէաբանական այն կազմին, որը բոլոր կետերում ստանալու անհրաժեշտ արդյունքն: Նշեցի նաեւ, որ հավանաբար այնտեղ բուլանում է կենսաքիմիական (ֆերմենտների) ակտիվությունը եւ չի ապահովվում մանրէաբանական անհրաժեշտ կուլտուրայի խտությունը: Նրանք, իհարկե, զարմացել, բայց ավելի շատ զայրացել էին, սակայն այդպես էլ բացատրություն չտվեցին: Չտվեցին, որովհետեւ ինչպես ես հասկացա, կամ ավելին անել նրանք չեն կարողանում, կամ էլ իրենց ձեռնտու է, երբ ամեն օր իրենցից 250 դրամով գնում են այդ մի գդալ մերանը, որը յուրաքանչյուր ընտանիքի համար ամսական հսկայական գումար կկազմի: Լաբորատորիայից դուրս գալուց ակամա աչքս ընկավ պատի տախտակին փակցված թղթերին՝ հեղինակային վկայագրեր, այստեղից-այնտեղից հավաքած կարծիքներ, «հին Նարինեի» լիցենզիայի արգելման որոշումը եւ այլն: Հասկանալի էր, որ «Նարինեի» բիզնեսով զբաղված այդ եղյակը իր արտադրանքի թերությունները լրացնում է նման միջոցներով եւ իրենց մոտ մտնողներին անմիջապես ցույց տալիս ջրի բորման սարքը, թերմոստատը, սառնարանը, ապակյա փորձանոթները եւ այլն՝ տպավորություն գործելու համար, իսկ բողոքողներին անմիջապես դուրս հրավիրում:

Որոշեցի գնալ հին զոովետ ինստիտուտ համոզվելու համար, թե պահպանվե՞լ է արդյոք «Նարինեի» լաբորատորիան, թե իրոք զրկվելով լիցենզիայից, դադարեցրել է իր գոյությունը: Բանից պարզվեց, որ ոչ ոք նրանց լիցենզիայից չի զրկել: Նույն շենքի առաջին հարկում «Նարինեն» դարձյալ արտադրվում է եւ 200 դրամով (15 մլ-ը) վաճառվում: Հին զոովետից վերցված մերանից առաջին նմուշում լավ «Նարինե» ստացվեց: Երկրորդում թեթեւ ստացվեց, բայց որոշ չափով բուլացած (ծոր տալու աստիճան), երրորդում արդեն ստացվեց... սովորական մածուն: Այսինքն այստեղ էլ «Նարինեն» իր բարձրության վրա՝ չքնվեց: Մի կարեւոր հանգամանք եւս: Երկու «Նարինեների» պատրաստման ընթացքը եւ պայմանները նույնն են, բացի կաթի տաքացման աստիճանից: Ըստ հին խմբի, պետք է տաքացնել 40-42 աստիճան, մինչդեռ նոր եղյակը չգիտես ինչու բարձրացրել է (բացատրականում նշվածը) 45-47 աստիճան եւ, ինչպես պարզվեց, այդ 5 աստիճան տարբերությունն իրենց արտադրանքի վարկը ոչ միայն չի կարողանում փրկել, այլ միգուցե անհաջողության հիմնական պատճառն է: Չէ որ 42 աստիճանից բարձր աստիճանում սկսվում է նաեւ ստիտակոցների (իսկ ֆերմենտները ստիտակոցային բնույթ ունեն) բնազրկման երեւույթը: Բայց այնուամենայնիվ՝ որի՞ն հավատալ: Միգուցե այդ եւ մյուս հարցերին պատասխանեն գյուղատնտեսության եւ առողջապահության նախարարությունների մասնագետնե՞ր:

Ամփոփման փոխարեն: Բիզնեսը անշուշտ եկամտաբեր զբաղմունք է, բայց ազնիվ բիզնեսը երկար ժամանակի վրա տարածվող ավելի եկամտաբեր եւ բարոյական գործ է, հատկապես երբ անմիջապես առնչվում է մանուկների գոյության եւ առողջության հարցին:

ՎԱՇԵՏԼԻՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ազգային

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ինչո՞ւ ոեsf է վերանայվի ՀՅԴ կասեցման հարցը

Այժմ մեզանում չկա մեկը, որը կասարելապես անսարբեր լինի այս հարցի նկասմամբ անկախ Դաշնակցության հանդեպ իր վերաբերմունքից: 1994-ի դեկտեմբերի 28-ի նախագահական հրամանագրով, այնուհետեւ 1995-ի հունվարի 13-ի Գերագույն դասարանի վճռով սկզբնապես 6 ամսով կասեցված ազգային-ազանդական կուսակցություններից մեկի գործունեության դադարեցումը շարունակվում է արդեն երկու տարուց ավելի: Նախապես կուսակցության կասեցումը դայմանավորվում էր նրա կազմում այժմ արդեն լայնորեն հայտնի «Դրո» ահաբեկչական կառույցի գոյությամբ, ինչը Գերագույն դասարանը ժամանակին մերժեց՝ հիմք ընդունելով անմեղության կանխավարկածը, իբրեւ կասեցման դասճառ արձանագրելով սոսկ մեկը՝ նրա ղեկավար մարմիններում արասահմանյան բաղաքացիների առկայությունը: Դա մեկնաբանվում էր եւ մեկնաբանվում է իբրեւ «դրսից» հայասանման հասարակական-բաղաքական կազմակերդության ղեկավարման վկայություն, մի բան, որն անբույլասելի է մեր երկրի օրենքով: Օրենքի այս կետն, ինչ խոսք, խիս վիճարկելի է, ինչպես նաեւ «դրսից ֆինասավորվելու» դարագան, որովհետեւ թե մեկը, թե մյուսը չափազանց հեշտ շրջանցելի են, եւ այդպիսի իրողության դեպքում կասարելապես անվերահսկելի: Օրինակ, ով կարող է դնդել, թե մեր մյուս կուսակցությունները իսկապես չեն ղեկավարվում եւ չեն ֆինանսավորվում «դրսից» կամ ոչ սեփական աղբյուրներից իբրեւ մայր կամ քույր կուսակցություններից: Սրան հավասալ -չհավասալը յուրաքանչյուրի խղճի գործն է: Քավ լիցի, հակված չեմ կասկածի տակ առնելու Հայասանի մյուս կուսակցությունների ազնվությունն ու անկեղծությունը, սակայն չեմ կարող չնշել, որ ցանկության դեպքում յուրաքանչյուրը կարող է թաքցնել այդ հանգամանքը թե հասարակությունից, թե ղեսությունից: Հրահանգներն սանալով բանավոր, իսկ դրամը անձնական նվիրասվությունների տեսքով: Կոնկրես Դաշնակցության դարագայում ՀՀ արդարադասության նախարարությունն այժմ իբրեւ «մեղադրանք» առաջ է քաշում այն վարկածը, թե ՀՅԴ հայասանյան Գերագույն մարմինն ընտրվել է «դրսի» որոշմամբ հրավիրված ժողովում: Բայց մի՞թե դժվար կլիներ թաքցնել այդ հանգամանքը եւ ձեւացնել, թե Հայասանի դաշնակներն իրենց ժողովը հրավիրել են միանգամայն ինքնաբուխ, սեփական նախաձեռնությամբ: Մարդիկ չեն դիմել փասը թաքցնելու միջոցին, եւ դա հիմա օգտագործվում է... իրենց դեմ: Ուսի հայասանյան օրենքի այս կետերն, իմ կարծիքով, առնվազն ավելորդ են եւ ոչինչ չեն տալիս մեզ՝ միջազգային հանրության աչքում վարկաբեկելուց բացի: Համենայն դեպս, թվում է, թե ցանկացած օրենսդիր դարավոր է ցանկացած օրենքում այնպիսի նորմեր սահմանել, որոնք ենթակա լինեն իրական վերահսկողության, այլապես շրջանցման սողանցքները դրանք դարձնում են ոչ միայն խոցելի, այլեւ հեղինակազրկում են դեսությունը իր իսկ թաղաքացիների աչքում, քանզի նրանք սեփական փորձով համոզվում են, թե կարելի է նաեւ օրենքը չկասարել ու մնալ անդասիժ:

Ինչեւէ, օրենքը օրենք է, լավ, թե վաս, եւ օրինաղահ թաղաքացիները դարասավոր են այն կասարել: Ուսի ելնենք այն մեկնակետից, թե Հայասանի բոլոր թաղաքացիները... օրինաղահ են եւ մեծագույն սիրով դասրաս են կասարելու մեր երկրը նույնիսկ վրձարկելի, նույնիսկ սողանցքներ դարունակող օրենքները: Տվյալ դարագայում Դաշնակցությունն արդեն առնվազն տարիուկես գոռում-գոչում է, թե ինքը օրենքի դահանջները կասարել է, մասնավորապես նրա ղեկավար մարմնում, որն այժմ «Հայասանի Գերագույն մարմին» է կոչվում, արտերկրի որեւէ թաղաքացի այլեւս չկա: Ինչ վերաբերում է տիրահոչակ «Դրո» կառույցին, աղա նրա անդամների արդեն ավարտված դասարանը որոշում է կայացրել Դաշնակցության գործունեությունը կասեցնելու մասին, ՀՀ արդարադասության նախարարության ներկայացուցիչը հայտարարել է, թե նախարարությունը կասեցումից դուրս գալու ուղիներ կառաջարկի: Սակայն ուրբաթը շուտ է վրա հասել, քանի շաբաթը, 6 ամիսը չլրացած ընդունվել է ՀՀ նոր Սահմանադրությունը, որն արդեն արգելում է նախարարությանը նմանօրինակ հարցերով զբաղվել: Ասենք, տղավորությունն այն է, որ եթե նույնիսկ Սահմանադրությունը թույլ էլ տար նախարարությունը որեւէ կոնկրես բան առաջարկել չէր կարողանալու: Որովհետեւ հարցն այնքան է թաղաքականացված (հարկին, թե անհարկի), որ միայն չափազանց միամիտ պիտի լինել հավասալու համար, թե Հայասանում հիմա որեւէ ղեսական դաշտնյա, առանց երկրի թաղաքական բարձրագույն ղեկավարության կարծիքի, կարող է այդպիսի հարց լուծել:

Ուսի այս հրաղարակման խորագիրը դարձած հարցի դասախանը որոնելիս նախ եւ առաջ հարկ է կռահել երկրի ղեկավարության տրամադրություններն այսքան նրբանկաս մի խնդրում:

Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը մինչեւ այժմ որեւէ հիմք չի տվել ենթադրելու, թե իր վերաբերմունքը մազաչափ փոխվել է Դաշնակցության նկատմամբ: Այն եղել եւ մնում է անվերադահ բացասական: Սակայն խնդիրը ամենեւին միայն նախագահի վերաբերմունքի մեջ չէ: Ի վերջո, չի կարելի չարձանագրել, որ Դաշնակցության գործունեության կասեցման մասին որոշումը, որն ընդունվեց նախորդ խորհրդարանական ընտրություններից առաջ եւ շարունակվեց նաեւ նախագահական ընտրությունների ընթացքում, բարոյական վնաս հասցրեց Հայասանի, իբրեւ ժողովրդավարական երկրի, միջազգային հեղինակությանը, հարվածեց ու շարունակում է հարվածել իր իսկ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, որպես ժողովրդավարության ջասագով ղեկավարի, անձնական վարկին: Դաշնակցության կասեցումը մեծ չափով նպաստեց առանց այն էլ դարակսված հայկական Սփյուռքի տարանջասմանը եւ սփյուռքահայության դաշնակցամես զանգվածներին սառեցրեց մայր-հայրենիքից: Հայասանում Դաշնակցության կասեցման հետ դադարեցվեց նաեւ դաշնակցական ու դաշնակցականամես մամուլի գործունեությունը, որի մասին, որքան հիշում եմ, կասարելապես ոչ մի խոսք չկար ոչ նախագահի 1994 թվականի դեկտեմբերի 28-ի հրամանագրում, ոչ էլ Գերագույն դասարանի 1995 թվականի հունվարի 13-ի արդեն հիշասակված որոշման մեջ: Դա էլ մի կողմից չափազանց անբարենդաստ տղավորություն թողեց թե հանրաղեսության ներքին կյանքի, թե արտաքին հարաբերությունների վրա: Մի խոսքով, Դաշանակցության կասեցման վնասը մեծ էր եւ է, իսկ ահա օգուտը որն էր անչափ դժվար է մասնանշել:

Ուսի կարծում եմ, որ կուսակցության կասեցումը դադարեցնելու մասին որոշում ընդունելը բխում է երկրի կենսական շահերից:

Այլ հարց է, թե ի՞նչ կարգով ղեսք է դա արվի:

Անհավանական չէ, որ այդպիսի մի նոր հրամանագիր արձակի հենց ինքը նախագահը, որ մասնանշվի, թե վերացնում է իր նախորդ հրամանագրի սահմանած արգելքը ելնելով այս կամ այն հանգամանքներից: Դա, համոզված եմ, դասիվ կբերի նախագահին: Եվ այս հարցում ՀՅԴաշնակցությունն իր հայտարարություններով ու գործով ղեսք է օգնի ՀՀ նախագահին:

Կարող է ընտրվել նաեւ այլ ճանաղարհ հանրաղեսության Գերագույն դասարանն ինքը ղեսք է անդրադառնա իր 1995 թիվ հունվարի 13-ի որոշմանը՝ եւ արձանագրելով, որ նրա ղահանջներն արդեն կասարվել են վճիռ ընդունի կուսակցության կասեցումը դադարեցնելու մասին:

Մամուլում այժմ մասնանշվում է նաեւ երրորդ հնարավորությունը՝ Սահմանադրական դասարանի վճռով կասեցումը դադարեցնելը: Իսկ այդ հարցով Սահմանադրական դասրան կարող են դիմել թե նախագահը, թե Ազգային ժողովի դասգամավորների մեկ-երրորդը:

Ինչեւէ, ցանկության դեպքում ճանաղարհը կարելի է գտնել: 106-ամյա ազգային-ազանդական կուսակցության կասեցումը մայր-հայրենիքում չափից ավելի է երկարում, շաս բաներով վնասելով մեզ եւ փոխարենը ոչինչ չտալով: Սա արդեն կասեցում չէ, վեր է ածվել կամ վեր է ածվում...արգելքի: Իսկ Դաշնակցության արգելումն ուղղակի անհնար է, որովհետեւ ով ինչ ուզում է մտածել շաս-շասերի աչքում նա դահանջել է ու դեռ երկար կդահանջի ազգային իդեալների համար դարից ավել անձնազոհ դայքար մղողի ռոմանտիկ լուսաղսակը: Եվ այդ լուսաղսակը նրանից ոչ ոք չի կարող խլել, իսկ մայր-հայրենիքում հալածյալի ներկա վիճակը միայն նոր գույներ է ավելացնում այդ ներկաղնակին: Հետեւաբար, նույնիսկ ամենից հակադաշնակցական կեցվածք ունեցողները դիտի հասկանան, որ կասեցումը շարունակելով՝ իրականում մեծագույն ծառայություն են մատուցում իրենց հակառակորդներին: Հետեւաբար որքան շուտ լուծվի այս վաղ թե ուշ լուծվելիք հարցը՝ այնքան ավելի լավ կլինի բոլորի համար:

ՌՈՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ

Եկեղեցին բարեփոխման շեմին

Հայացք ձգելով ազգային կրոնասիրության, նրա թվացյալ կամ իսկական ներկայությանը մեր ամենօրյա կյանքում, բախվում ենք տարածված մտակաղապարների: Սիավասիկ, «նախկինի պես հիմնական զանգվածը օտարված է մայր եկեղեցուց», «եկեղեցին իր հաստատություններով ու սպասավորներով շրջված չէ դեպի սոցիալական աղքատության մեջ դեգերող մարդը», «եկեղեցու եւ ժողովրդի միջեւ ինչքար բարոյական անջրպետ կա»:

Դրանց դասճառները տարբեր են: Մեզանում զգալի թիվ են կազմում մարդիկ, ովքեր ընդում են, թե առհասարակ, «...քրիստոնեական հավասքի, հատկապես եկեղեցու կարիք չունեն»: Հաճախ նման դիրքորոշումը սեռված բացասական ուղղվածություն ունի: Զրուցակիցներիցս մեկի համոզմամբ, «մայր եկեղեցին գրեթե հանդես չի գալիս թույլերի ու անդասդանների դաշտանությամբ» եւ «եկեղեցին չունի իր սոցիալական ուսմունքը», Ավելին, «համակերդվել է անարդարությունների ու բռվառության հետ»:

Հայ մտավորականության շրջանում առանձնահատուկ են այնպիսիք, ում համար առավել կարեւոր են քաղաքական կյանքի ախտահիկ սկզբունքները, քան կրոնասիրությունը: Լավագույն դեպքում, ազգային հավասքը դիտվում է որպես դաշտահոգեւոր ավանդույթ եւ ոչ ավելին:

Որոշ ինտելեկտուալների կարծիքով, առհասարակ, բոլոր խոսակցությունները հավասքի շուրջ բացարձակ՝ ավելորդ են: Հավասքը ամեն մարդու նեղ անձնական, մասնավոր գործն է: Չեմ կարող չհամաձայնվել: Յուրաքանչյուր մարդ խիս յուրովի է ընկալում ու ապրում հավասքը, նրա բացառիկ կարեւորությունը ներանձնական կյանքում: Հավասքը անհնար է մի մարդուց մյուսին փոխանցել, քանի որ ներքնապես ապրվող արժեք է, կյանքի իմաստ: Պասահական չէ, որ իր բարոյական ընտրությամբ մեզանից ամեն մեկը հաշվետու է նախ եւ առաջ իր խղճի ու Աստծո առաջ: Թե ինչու հայ մարդը ղեսք է ապրի քրիստոնեական արժեքներով, վարի մարակենցաղ կյանք՝ դա, նախ եւ առաջ, նրա ներքին անձնորոշման խնդիրն է:

Ոչ մի համաղարտադրող կրոնաբարոյական քարոզով եւ ոչ մեկը չի դարձել բարեդաշտ քրիստոնյա: Առավել եւս՝ ազգային ավանդույթներին անհոգի ու անսիրտ հասցեագրումներով:

Իմ զրուցակիցների մի զգալի մասը այն կարծիքին է, որ «եկեղեցի հաճախելով ո՛չ երջանկանում ենք, ոչ էլ՝ փրկվում մահից» եւ որ «եկեղեցի հաճախելը դարձել է յուրօրինակ ժամանց եւ ազգային նորաձեւություն»: Մտահոգիչ է այսօրինակ դիրքորոշման ներքին դասճառաբանվածությունը. «եկեղեցում ձեռք բերված հոգեկան թեթեւությունը վաղանցիկ է, մխիթարիչ ինքնախաբկանք»: Առանձին դեպքերում որոշ գործադաշտ հայեր ասում են՝ «ոչ եկեղեցուն եւ ո՛չ էլ Քրիստոսին ղեսք է ադավինել: Անհրաժեշտ է ընթանալ այն ուղիով, որը թելադրում է բացառապես գործնական եւ ցանկացած բանասեղծական ցնորքներից զուրկ կյանքը»:

Ընթերցողը կհամաձայնվի, որ նման դասճառաբանությունները չեն հերքում եկեղեցում մեկտեղ ժողովվելու կարեւորությունը: Հիսուս Քրիստոսը դասգամել է. «Որտեղ երկու կամ երեք հոգի անունովս հավաքված լինեն, ես այնտեղ եմ, նրանց մեջ»:

Ասված մեզ դիմում է, ընորհներ դարգեւում, նախ եւ առաջ, եկեղեցում: Մեր ազգային եկեղեցին մեզ տալիս է հավասքի ընդհանրություն, «հոգեւոր հայրենիքի» անփոխարինելի զգացողություն: Բացի այդ, Աստծո հետ հոգեմտերձենալու բացառիկ կարեւորությունն այնքանով ենք գիտակցում, որքանով հասկանում ենք, որ ուրիշ մարդիկ ի զորու չեն մեզ տալու այն, ինչին բաղձագին ձգտում է մեր խաչաանջ հոգին: Իրենք՝ «այդ ուրիշները» եւս չունեն այն ամենը, ինչը հասու է միայն Աստծուն: Գործադրվում է եւս մի մտակաղապար. «հավասքը բացառապես ծերերի, երեխաների ու հիվանդների համար է»: Ինչ խոսք, ասված ողորմած ու գթառաս է, նախ եւ առաջ, ծերերի, հիվանդների ու երեխաների հանդեպ: Սակայն չէ՞ որ հոգով ու մարմնով կարող են տկար լինել նաեւ հարուստ մարդիկ, եթե չեն ընչում Ավետարանի սիրով եւ նույն զգացմունքով հանդեպ Հիսուս Քրիստոսը:

Ժողովրդավարական գործընթացները ստկումներ են մտցնում հավասքի նկատմամբ ունեցած ոմանց դասկերացումների մեջ: Բազմաթիվ հայ մտավորականներ անկեղծորեն համոզված են, որ «մարդու իրավունքների ու ազատությունների դաշտպանությունը հավասքի կարիք չունի»: Ավելին, գտնում են, որ «հավասքի ու մարդու իրավունքների դաշտպանության միջեւ ուղղակի կապ չկա»:

Անխորհուրդ բանավեճի մեջ չմտնելու նդատակով հիշեցնեմ, որ մարդու իրավունքների դաշտպանությունը մեզանից շատերի համար ոչ այլ ինչ է, քան մերձավորին սիրելու աստվածային դատվիրանի կատարում: Առհասարակ, մեծ է եկեղեցու դերը ժողովրդավարական, ազատական արժեքները հասարակական կյանքում արմատավորելու գործում: 19-րդ դարի հայտնի սոցիոլոգ Ալեքսիս Թոքվիլը կարծում էր, որ ԱՄՆ-ում եկեղեցին հանդիսացել է եւ հանդիսանում է ժողովրդավարության, նրա արժեքների դատսիարակության իսկական դորոց: Նրա խոսքերով, բարքերը ավելի նշանակալից չափով, քան օրենքներն ու քաղաքական հանգամանքները, նդատել են ամերիկյան ժողովրդավարության հաջողությանը: Իսկ բարքերը արմատավորված են կրոնական բարոյականության մեջ: Այսօր եւս եկեղեցին որոշակի դեր է խաղում ԱՄՆ-ի հասարակական-քաղաքական կյանքում: ԱՄՆ-ի նախկին փոխնախագահ Հուբերտ Հեմֆրին նշում է, որ 1964 թ. անհնար կլիներ քաղաքական իրավունքների մասին օրենքն անցկացնել, եթե եկեղեցին ջերմ աջակցություն ցույց չտար այդ նախաձեռնությանը:

Ինչպես Քրիստոսն իր առաքելությունն իրականացրեց կոնկրես հասարակության մեջ, մեր ազգային եկեղեցին եւս ղեսք է դայքարի կրոնական օտարվածության, խորթացածության եւ հավատազրկության դեմ: Սակայն դրա հաջողությունը կախված է նրանից, թե որքանով Մայր եկեղեցին հանդես կգա անաղահով խավերի կենսական իրավունքների դաշտպանությամբ: Այսօր եկեղեցին կազմում են նրանք, ովքեր աղքատների ու թշվառների հետ են, որոնք տառապում են մեղքից, սակայն չեն մեղսագործում: Նա, ով սոցիալապես անաղահովների ու աղքատների հետ է ու նրանց մեջ, հավատարիմ է իր ժողովրդի դատմությանը, եւ կերտում է այդ դատմությունը: Մայր եկեղեցու իրավունքն ու դարտականությունն է քննադատել հայ հասարակության բարոյական արատներն ու խոցերը: Չէր խանգարի նաեւ, որդեսզի ազգային եկեղեցին փոխառեր Արեւմուտքի եկեղեցիների դրական փորձը հիվանդախնամ, աղքատախնամ հիմնարկություններ, քրիստոնեական կոոպերատիվներ, փոքր ձեռնարկություններ եւ բանկեր ստեղծելու գործում: Միայն այս ուղիներում է հնարավոր եկեղեցու եւ ժողովրդի միջեւ հոգեւոր խորթացածության դրսերեւույթների հաղթահարումը:

Մայր եկեղեցին երկընտրանքի առաջ է կանգնած. կամ արմատականորեն բարեփոխել հավատարոգչությունը, կրոնաեկեղեցական նորմերն ու վարչազմակերդչական կառուցվածքը, կամ շարունակել այնպես ապրել, կարծես թե, ոչինչ չի փոխվել մեր ազգային կյանքում:

ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Մոսկվան կտրուկ մեծացնելու է միջուկային առեւտուրը

ՄՈՍԿՎԱ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ՓԱՍՏ: Ռուսաստանը ծրագրում է մինչեւ 2000 թվականը կտրուկ մեծացնել առեւտուրը միջուկային բնագավառում: Այդ մասին հայտարարեց Ռուսաստանի ատոմային էներգետիկայի նախարար Վիկտոր Միխայլովը: Նրա խոսքերով, մինչեւ 2000 թվականը միջուկային արտահանումների մակարդակը կհասնի 3,5 մլրդ դոլարի: 1996 թվականին այդ մակարդակը կազմել է 2 մլրդ դոլար, որը 1995 թվականի ցուցանիշը գերազանցում էր 10 տոկոսով: Նախարարը տեղեկացրեց նաեւ, թե իր նախարարությունը ծրագրում է միջուկային կայաններ կառուցել Չինաստանում, Հնդկաստանում եւ Իրանում, ինչպես նաեւ շարունակել կազմակերպված մարտագլխիկների ուրանի վաճառքն ԱՄՆ-ին:

Ռուսաստանը, չնայած Միացյալ Նահանգների բողոքներին, շարունակելու է ատոմային կայանի կառուցման աշխատանքներն Իրանում, որը տարեկան 100 մլն դոլարի շահ է ենթադրում: Միխայլովի խոսքերով, Բրազիլիան, Ինդոնեզիան, Հյուսիսային եւ Հարավային Կորեաները, ինչպես նաեւ Կուբան կարող են շուտով դառնալ Ռուսաստանի գործընկերները:

Շամիլ Բասաեւ. «Մենք Ռուսաստան ին մարդասիրական օգնություն ցույց կտանք...»

ԳՐՈԶՆԻ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամենից առաջ հավաստել Չեչնիայի անկախությունը, անխնա պայքար ծավալել հանցագործության դեմ եւ կազմել բնակչության արժանի գոյություն ապահովող տնտեսական ծրագիր, վերջապես, գտնել Ռուսաստանի հետ համագործակցության ձեւը. Չեչնիայի նախագահ ընտրվելու դեպքում այս հերթականությամբ է թվարկել իր առաջնահերթ քայլերը Շամիլ Բասաեւը՝ Դանիայի «Պոլիտիկեն» թերթում հրապարակված հարցազրույցում:

Նա բացառել է անջատականների ղեկավարության մեջ երկպառակության հնարավորությունը ընտրարավի ավարտից եւ ներկայիս մրցակիցներից մեկի նախագահի պաշտոնն զբաղեցնելուց հետո: «Մենք այնքան չենք ստորացել, որ վայրի գազանների նման նետվենք միմյանց վրա՝ իշխանություն ստանալու նպատակով, հայտարարել է նախագահության թեկնածուն: Եթե Ռուսաստանը փորձի սեղմ խրել չեչեն առաջնորդների միջեւ եւ մեզ գժտեցնել միմյանց հետ, մենք կհարձակվենք Ռուսաստանի վրա»:

Պատասխանելով այն հարցին, թե ինչպիսի՞ն կլինեն հարաբերությունները Ռուսաստանի հետ, եթե ինքը դառնա Չեչնիայի ղեկավար, Բասաեւն ասել է. «Հատկապես բարեկամական: Մենք հաճույքով Ռուսաստանին մարդասիրական օգնություն ցույց կտանք, որպեսզի նա կարողանա զարգանալ»:

Ներքին առեւտրային բարեփոխումներ Թեհրանում

«Շահրվան» սուպերմարկետ տիպի խանութների ցանցը բավականին հակասական արձագանքներ է առաջ բերել Իրանյան հասարակությունում: Այնտեղ վաճառվում է բազմաբնույթ տեսականի, սկսած կանանց սպիտակեղենից, վերջացրած սառեցված պիցցաներով եւ պահածոյացված բանաններով: Հատկանշական է, որ այս խանութներում կիրառվում է արգելապատնեշների միջոցով կազմակերպված առեւտուրը, մինչդեռ մուսուլմանական երկրներում կան կամ կանանց կամ տղամարդկանց խանութներ: Կանանց ներքնազգեստների բաժնի մոտ դրված է հատուկ նշան, որը արգելում է տղամարդկանց ներս մտնել: Իհարկե, մուսուլմանական հավատը թույլատրում է կնոջը նմանատիպ բաներ կրել, եթե դա արվում է ամուսնու հաճույքը բավարարելու համար: Խանութը հիշեցնում է իր արեւմտյան նմանակներին՝ բարձր առաստաղ, լայն միջանցքներ եւ հսկայական ավտոկանգառ, իսկ հաղորդիչներից անդադար հնչում է Բեթհովենի երաժշտությունը:

Առաջին անգամ այդ խանութները հայտնվեցին 2 տարի առաջ, Թեհրանի քաղաքապետի նախաձեռնությամբ: Լինելով իրանյան քաղաքականությունը վերակողմնորոշելու ձգտող գործունյաների խմբից մեկը եւ հաշվի առնելով 1979 թվականի հեղափոխության պատմության գիրկն անցնելը, Ղոլամ Հուսեյն Կարբաչին ցանկանում էր հարվածել սեւ շուկային եւ իջեցնել գները, որն էլ հանդիսանում է կառավարության դեմ ուղղված թեհրանցիների հիմնական բողոքների պատճառը: Քաղաքի շրջակայքում տեղադրված 5 խանութներով եւ այս տարի բացվող մեկ այլ հնգյակով Կարբաչին ձգտում է քաղաքացիներին հիասթափեցնել ավանդական շուկաներում բազարներում կատարվող առեւտրից: Վերջինս հանդիսանում է նաեւ կրոնական պահպանողականների ամրոցը: Նրանք պաշտպանում արդեն հաստատեցին ննադատել քաղաքապետին, ասելով, թե այդ խանութները չափազանց թանկ են աղքատ մարդկանց համար եւ Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլա Ալի Խոմեյնին նախազգուշացրեց նրան, որ Թեհրանի «իսլամական ինքնությունը» պետք է պահպանվի:

Թեհրանում աշխատող մի արտասահմանցի դիվանագետի ասելով, «Շահրվան» ցանցը «սպառնալիք է հին կարգացած քաղաքական շահերի համար»: Շատ թեհրանցիների կարծիքով, Կարբաչին այս ամռանը, երբ ներկայիս նախագահ Ռաֆսանջանիի երկրորդ եւ վերջին ժամկետը լրանա, ցանկանում է դառնալ նախագահ: Քաղաքագլուխը հաղորդել է, թե ինքը «ոչ կարող է հաստատել, ոչ էլ հերքել այդ լուրը»: Սակայն, եթե նա որոշի իր թեկնածությունն առաջադրել, պետք է հաշվի առնի կրոնական պահպանողականների բնամանքը: Վերջիններս հայտարարում են, թե քաղաքապետարանը թաղված է կաշառակերության մեջ: Սակայն քաղաքագլուխն այդ մեղադրանքները համարում է քաղաքական շարժառիթի դրսեւորում: Քաղաքագլխին առարկելու մոլլաների բուն պատճառը այն է, որ վերջինս մրցակցությունը գաղափարախոսությունից ավելի է վեր դասում: «Իսլամը կարող է ծաղկել բարգավաճող տնտեսության պայմաններում, ասում է Կարբաչին, եւ պետք չէ այդքան ուշադրություն դարձնել ոչ քաղաքական գաղափարներ, ոչ էլ այլ կարողություններ ունեցողներին»:

Թեհրանցիներն ասում են, թե քաղաքագլուխը բարելավել է քաղաքային կյանքի պայմանները, եւ նրանց մեջ Կարբաչին շատ աջակիցներ ունի: Բոլոր բաց տարածությունները կանաչապատելու համար նրան սկսել են անվանել «պարոն Ծաղիկ»: Բացի այդ, անտեսելով կրոնականների բողոքները, նա քաղաքը մաքրել է «եկեք նվիրվենք իսլամին» տիպի ցուցանակներից: Խանութների բարձր գները հաճախորդներին ստիպում են դիմել գողության, մանավանդ կանանց, որոնց երկար չադրաները օգնում էն ինչ-որ բան դուրս տանելու, ուստի ելքի մոտ բոլորին ստուգում էին, սակայն, ճշմի որ դա նվաստացուցիչ էր, քաղաքագլուխը հրամայեց տեսախցիկներ տեղադրել: Այժմ յուրաքանչյուր «ծարտիկ» հաճախորդ բռնվելիս խոստովանում է իր հանցանքը՝ կուրծքին ծիծաղով իրեն հեռուստացույցով տեսնելիս:

Սա այսպիսին է արդիականության իրանյան տարբերակը:

«ՆՈՎՈՍՏԻ»

Զմրուխտագույն կղզու զարթոնքը

Կապիտալ ստանալը մի բան է, հմտորեն օգտագործելը՝ բոլորովին այլ բան

Բանաստեղծների ճնարական ոգեկոչումների արժանացած երբեմնի երազային, խոնավ երկիրը, որի լավագույն մասնագետները արտասահման էին մեկնում աշխատանք որոնելու, այժմ զարթոնք է ապրում եւ գտնվում է գործարար մարդկանց ուշադրության կենտրոնում: Եվ ոչ միայն նրանց: Անցյալ տարի գրականության Նոբելյան մրցանակը շնորհվեց իռլանդացի Շիմուս Հինիին: Լոնդոնի թատերասրահներում իռլանդական «Ռիվերդենս» պարային խումբը գերում է հանդիսատեսներին: Իռլանդական պոպ խմբերը համաշխարհային հռչակ են վայելում: Վերջերս Իռլանդիայում կայացավ Եվրամիության գագաթաժողովը: 1949 թվի ապրիլի 18-ին անկախություն ստացած երկրի մայրաքաղաք Դուբլինում կյանքը եռում է: Ինչո՞վ է բացատրվում այս փոփոխությունը: Ի՞նչ գործոններ են նպաստել դրան: Այս հարցերն է շոշափում «Նյուզուիք» հանդեսի դեկտեմբերի 23-ի համարը:

ԻՌԼԱՆԴԻԱ

այստեղ հաստատվելու», ասում է Ջոն Ֆիցջերալդը՝ Դուբլինի տնտեսական եւ սոցիալական ուսումնասիրությունների ինստիտուտից: Ազգային պարտքն ու արժեզրկումը անընդհատ աճում էին, իսկ աշխատատեղերը՝ նվազում: Նույնիսկ հեռուստատեսությամբ մարդկանց հորդորում էին այլ վայրերում երջանկություն որոնել: Պատկերն այժմ փոխվել է: Միլիոնավոր մարդկանց Ամերիկա տեղափոխվելու դրդապատճառ հանդիսացած 1840-ի մեծ սովին նախորդած տարիներից հետո, առաջին անգամ ներգաղթողներն ավելի շատ են, քան արտագաղթողները: Նույնիսկ մի ժամանակ «Գինես» գարեջրի սիրահարների համար ազգային խմիչքի ծննդավայր, իսկ զբոսաշրջիկների համար տեսարժան, գողտրիկ վայր հանդիսացող Դուբլինից փոքր-ինչ արեւմուտք գտնվող Լեյֆլիի փոքրիկ, աննշան քաղաքն է այժմ դարձել համաշխարհային կենտրոն, այնտեղ հաստատված «Ինտել» համակարգչային ֆիրմայի շնորհիվ: Արդեն երեք համեմատաբար ավելի փոքր գործարաններ հիմնած «Ինտելն» այժմ մոտ հազար բանվորներից կազմված մի հսկայական բանակ է ղեկավարում, կառուցելու համար 1,5 միլիարդ դոլարի արժողությամբ միկրոսխեմաներ արտադրող գերարդիական մի գործարան, որը հավանաբար այդ ասպարեզում երկրորդ խոշորագույնը կլինի ԱՄՆ-ում գործող նմանօրինակ գործարանից հետո: Միկրոսխեմաների արտադրության բնագավառում Իռլանդիան արդեն համաշխարհային հռչակ է վայելում: «Միկրոսոֆթ» ֆիրմայի ցանկացած սխեմա, որ երկրում էլեկտրոնի, միեւնույն է, իռլանդական արտադրանք է:

Եթե Գերմանիան ու Ֆրանսիան պայքարում են առնվազն պահպանելու իրենց տնտեսությունների դանդաղ աճի տեմպերը, ապա Իռլանդիան 1995 թվին արձանագրեց 8 տոկոսի, իսկ անցյալ տարի ավելի քան 6 տոկոսի աճ: Ընդհանրապես անցած հինգ տարիների ընթացքում Իռլանդիայի տնտեսությունը միջին հաշվով աճել է ավելի քան 5 տոկոսով, որն ամենաբարձր ցուցանիշն է Արեւմտյան Եվրոպայում: Գների աճը չնչին է, տարեկան 2 տոկոսից ցածր: Տնտեսական եւ մշակութային աճն իր հետ բերել է վստահություն, ներդրումներ եւ համընդհանուր ճանաչողություն: Ներդնող ընկերությունների թվում են 90-ականներին մեծ համբավ վայելող Անալոգը, Դելը, Մոտորոլան եւ այլն:

Այս բոլորը՝ կառավարության որդեգրած հետեւողական քաղաքականության եւ երկրում հարկային ու դրամական կարգապահության վերաբերյալ առնված միջոցների շնորհիվ: Սակայն առաջին հերթին, անկասկած, Եվրամիությանն անդամագրվելու շնորհիվ Դուբլինն այսօր տարեկան 2 միլիարդ իռլանդական ֆունտ է ստանում Բրյուսելից՝ իր ենթակառույցները բարելավելու համար: Այդ անդամակցությունը նրան անկախություն տվեց բրիտանական տնտեսությունից: «Դա մեզ ստիպեց զգալ, որ մենք Եվրոպայի մի անկյունում նետված փոքր երկիր չենք, այլ նրա մասն ենք եւ կարող ենք նպաստել նրա զարգացմանն ու առաջընթացին», ասում է Դեյվիդ Հաննան, արդյունաբերության զարգացման գործակալությունից: Իսկ 1990 թվից երկրի նախագահի 52 տարեկան Մերի Ռոբինսոնի (որն, ըստ հարցախույզների տվյալների, ամենից ժողովրդականությունն վայելող անձնավորությունն է երկրում) կարծիքով ներկա զարթոնքն «առանց Եվրամիությանն անդամակցելուն պարզապես շատ դժվար կլիներ»: Քաղաքականի հետ նաեւ հոգեբանական ազդեցություն ունեցավ: Վերացրեց մեր ուսերից Բրիտանիայի հետ մեր ունեցած պատմական հարաբերությունների բեռը: Մենք դադարեցինք մեզ պատկերացնել միայն այդ հարաբերությունների շրջանակներում: Այն մեծապես նպաստեց հողագործությանը, բերեց գների կայունացում»:

Բայց կապիտալ ստանալը մի բան է, հմտորեն օգտագործելը՝ բոլորովին այլ բան: Քանակից ավելի գումարի խելամիտ ու նպատակասլաց օգտագործումն է, որ կարող է փոխել երկրի դիմագիծը: Չէ՞ որ Պորտուգալիան եւ Հունաստանը նույնպես Եվրամիության անդամ են եւ հսկայական գումարներ են ստանում: Բայց նրանց տնտեսությունը դեռ կաղում է կամ դանդաղ զարգանում: Իռլանդացիները զարգանում: Իռլանդացիները զարգանում: Իռլանդացիները՝ ոչ արագ, խոշոր քայլերով: Երկրի երկու գլխավոր քաղաքական կուսակցությունները, որոնք ավելի պատմականորեն են բաժանված միմյանցից, քան գաղափարապես, միեւնույն՝ կրթության եւ երթեւեկության խնդիրների լուծմանն են բեւեռել իրենց ուշադրությունը:

Երկրի բարգավաճմանը նպաստել են նաեւ ժողովրդագրական տվյալները: Բազմանդամ ընտանիքները երիտասարդ տաղանդների «մեծ շտեմարան» են դարձել: «Ծնելիությունը, որ մի ժամանակ ծանր բեռ էր համարվում, այժմ օրհնանք ու բերկրանք է դարձել», նշում է պրոֆ. Բրենդան Ուոլշը Դուբլինի Յունիվերսիթի քոլեջից: Քոլեջներում ուսանողների թիվը կրկնապատկվել է մի տասնամյակ առաջվա թվի հետ համեմատած: Շրջանավարտները, հատկապես հոսանային հաղորդակցությունների, համակարգչային համակարգի եւ այլ տեխնիկական բնագավառների կրթություն ունեցողները, բավական հեշտությամբ են աշխատանք գտնում: Որակավորում ստացած մասնագետների պահանջը մեծ է: Արտասահմանյան ֆինանսական ընկերություններն արագորեն երկիր են ներթափանցում գրավիչ առաջարկություններով: Միջազգային ֆինանսական ծառայությունների կենտրոնում (ՄՖԾԿ), որը հսկայական շենքերի մի ամբողջ համալիր է, աշխատում են մոտ չորս հազար հոգի: Սակայն երկրում, անշուշտ, ամեն ինչ չէ, որ գոհացուցիչ է: Գործազրկությունը բավական բարձր է (11,5 տոկոս): Գործազուրկների մեծ մասը ավագ սերնդի ներկայացուցիչներն են, որոնք համակարգչային նորություններին ծանոթ չեն: Սոցիալական շերտավորումն ավելի է խորանում: Հենց վերոհիշյալ ՄՖԾԿ-ի աղակուց եւ մարմարից կառուցված համալիրի հետեւում գտնվում են քաղաքի հետնախորշերը, որտեղ վաղ առավոտից մինչեւ ուշ երեկո թափառում է հերոին եւ այլ թմրանյութեր օգտագործողների մի մեծ խումբ: «Նրանց օգնելը այնքան էլ ձեռնտու չէ կառավարության համար, քանի որ քվեարկություններին նրանք չեն մասնակցում», ասում է այդ վայրերում աղքատներից մեկը: Մյուս կողմից, որոշ դիտորդների կարծիքով, Բրյուսելի առաջարկությունը օժանդակությունը (որի համաձայնեցված ժամկետը ավարտվում է 1999 թվին) կարող է ընդհատվել, եթե այս ընթացքով շարունակվի բարգավաճումը: Այնպես որ նրանք շտապում են այն բանի վրա, որ երկիրը դառնա ինքնաբավ:

«ՆՈՎՈՍՏԻ»

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Ինչ լավ է, որ Յուրան եղել է մեր կողքին՝ Երկրում

Տիրավի իրավացի եւ արդար էր անմոռանալի Անդրեյ Պլատոնովը, որը մի օր բարբառեց. «Առանց ինձ ժողովուրդը կիսաս է»: Հիշեցի այդ մասին, երբ իմացա, որ վախճանվել է իմ սրտահարազատ Յուրի Երգնկյանը: Ամբողջ գիշեր չկարողացա գոցել աչքերս: Անընդհատ մտածում էի բարեկամիս մասին: Աչքերիս առաջ մթոլորտի հերթագայում էին իմ ու Յուրայի բազմամյա հանդիպումները, որոնցով բավարեն հարուստ էր անգամ դարաբաղյան շարժման ծանր ու բարդ ժամանակաշրջանը: Նա հաճախ էր գալիս իմ աշխատասենյակը՝ կոնկրետ առաջարկություններով, անյուրօրինակությամբ, վառ գեղարվեստականությամբ, դեկորների եւ զգեստների համահունչությամբ»:

Երգնկյանի բազմակողմանի տաղանդի լայն սպեկտրի մեջ ամենավառ գույնը թերեւս կարելի է համարել վերջին տարիների հեռուստատեսային հրապարակախոսությունը:

Վերջին տարիներին, այնուամենայնիվ, Յուրան, ինչպես երբեմն, ցույց էր տալիս, որ ինքը նախ եւ առաջ կինոռեժիսոր է: Ասես կանխատեսելով, որ ուր որ է պատերազմ է ճայթելու, այս անգամ արդեն բուն Հայաստանում, նա ստեղծեց մի հիանալի կինոնկար, որի խորագրի մեջ զետեղեց «Ռազմիկ» վեհ բառը: Խոսքը «Յո՞ երթաս, ռազմիկ» կինոֆիլմի մասին է: Բազմանդամ ընտանիքի բոլոր տղամարդիկ մեկնել են ռազմաճակատ: Վերադարձավ միայն մեկը: Նա իր հետ բերեց ոչ թե ռազմավարային կարի մեթենա, այլ մի փոքրիկ որբուկ աղջկա:

Բանաստեղծական արվեստին սիրահարված կինոռեժիսորը հավանաբար չէր կարող չվրձնել մի կսավ բանաստեղծի մասին: Նա գեղարվեստական ֆիլմ ստեղծեց հեղափոխական բանաստեղծ Ալեքսանդր Վերմիշեւի մասին: Իբրեւ պրոֆեսոր եւ դասախարակ նա բազում աներ թողեց իրենից հետո, եւ նրանց մեջ, թերեւս, ակնառու դիրք ունի այսօր նրա որդին՝ Ռուբեն Երգնկյանը: Հարկավոր էր տեսնել Յուրայի բարի ու մեծ աչքերը, երբ լուր ստացավ միջազգային փառատոնում Ռուբիկի հաղթանակի մասին: Մրցանակ «Բյուս» կինոնկարի համար:

Յուրայի թաղման օրը ես Մոսկվայում էի, վստահ լինելով, որ Ռուբիկը կհասկանար ինձ եւ կներեր, եթե իր համար ամենադառը օրը ես նրա կողքին չեմ, ուրեմն՝ պատճառն ամենեւին անձնական չէ: Կեսգիշերին, այնուամենայնիվ, կարողացա հեռախոսով կապվել եւ խոսել նրա հետ: Նստեցի գրամեքենայի մոտ:

Որոշեցի ժամանակակիցներիս անպայմանորեն պատմել այն մարդու մասին, որին խորապես հարգել էի: Երկու տարի մենք աշխատեցինք իմ սքենարով նկարահանվող «Գոտեմարտ» երկսերիանոց ֆիլմի վրա: Սակայն ուզում եմ հայտնել մի դիտվածի մասին, որը մեր համատեղ աշխատանքի հետ որեւէ առնչություն չունի: Քանզի այդ դիտվածի մեջ կա մի նրբագիծ, որ կօգնի բացել ամեն ինչում տաղանդավոր այդ մարդու նուրբ հոգու վարագույրը:

Յուրին որոշել էր ծանոթացնել ինձ իր բարեկամի՝ նկարիչ Դմիտրի Նալբանդյանի հետ: Բանի տեղ չդնելով ամեն տեսակի ասեկոսեները հայ գեղանկարչի իբրեւ թե պատեհապաշտ ստեղծագործությունների մասին՝ ես միշտ պատկառանքով եմ վերաբերվել նրան: Ի վերջո, բոլոր մեծ նկարիչները վրձնել են թագավորներին, որոնց մեջ պատահում էին նաեւ բռնակալներ: Դրանից նրանց մեծությունը չէր նվազում:

Նալբանդյանն ապրում էր Մոսկվայի բուն կենտրոնում՝ Յուրի Դոլգորուկիի հուշարձանի մոտ: Մի քանի ժամ անցկացրինք նրա արվեստանոցում: Յուրան անվերջ խնդրում էր նկարիչ բարեկամին պատմել խորհրդային ադամանդաբերական պարծենկոտությամբ պատմում էր, թե ժամանակին ինչ ասիճանի կնամոլ է եղել եւ որքան է տառապել այն բանից, որ խանական թվականներին երեւանում սակավաթիվ էին գեղեցիկ աղջիկները: Շատ-շատերը «ծուռտոտիկ էին ու մեծաքիթ»: Չթաքցրեց, որ հենց այդ պատճառով էլ բնակություն էր հաստատել Մոսկվայում:

Հանկարծ ես ինչ-որ զզվանք զգացի տանտիրոջ հանդեպ: Ասես հոսանք խփեց ինձ, մռուռտվեցին աչքերս: Եվս մի ակնթարթ, ու ես գիտեի՝ ինչպես հաճախ պատահում էր ինձ, որ արհամարհելով պատշաճ վարքն ու բարեկրթությունը, ես պիտի պայթեի: Սակայն չհասցրեցի, հանկարծ ուժեղ ճիչ լսվեց: Յուրան այն ասիածան բարձրաձայն ու բղավոցով դիմեց նկարչին նրա անուն-հայրանունով, որ թվաց, թե «Դմիտրի Արկադեւիչ» բառակապակցության խորքում ռումբ էր: Ծեր նկարիչը (այն ժամանակ նա յոթանասուն տարեկան էր) հանկարծակիությունից քար կտրեց: Այդ նույն բարձր ու զրնգուն նոտայի վրա Յուրան արտաբերեց. «Ինչպե՞ս եք համարձակվում»: Եվ մեկեն լռեց, ասես՝ քամուց հանգած բոցը:

Արդ, այնպես դուրս եկավ, որ ընկերս բռնկվեց նաեւ իմ փոխարեն: Իսկ ինձ մնում էր ասել գունատված նկարչին, որ նախքան խանական թվականները թուրքը ոչ միայն մորթոտել էր մեր ժողովրդին, այլեւ՝ ընտրողաբար ոչնչացրել ազգի բուն գեղեցկությունը: Երբ ասացի, որ պատրաստ եմ համբուրելու հայ կանանց հենց այդ ծուռ ոտքերը միայն այն բանի համար, որ նրանք կային, պահպանվել են եւ կենդանի մնացել՝ նանգին մերան դառնալով ժողովրդի վերածննդի ու նրա գալիք գեղեցկության, Դմիտրի Արկադեւիչը, որպեսզի ոտքերի վրա մնա, ձեռքերով գրկեց իր կողքը կանգնած Յուրիին՝ փարվելով նրա կրծքին...

...Ես եւ Յուրան Գորկու փողոցով քայլում էինք դեպի «Մինսկ» հյուրանոցը, որտեղ ապրում էինք այդ օրերին: Մի տեսակ լավ չէինք: Ես նրան էի հանգստացնում, նա՝ ինձ: Ասես խոսքը մեկ դարձած՝ երկուսս էլ սեփական ձեւով փորձում էինք արդարացնել նկարչին, որն ամեն ինչից բացի, հոչակավոր «Վերնատան» հեղինակն էր եւ դժվար թե ցանկանար վիրավորել ու նվաստացնել հայ աղջիկներին: Հատկապես ծիգ էր թափում Յուրան՝ իմ հանդեպ ինչ-որ պատասխանատվություն զգալով: Չէ՞ որ ինքն էր ինձ առաջարկել հյուր գնալ իր ընկերոջ՝ մեծահռչակ նկարչի մոտ: Նա անհարմար էր զգում նաեւ այն բանից, որ մենք հեռացել էինք առանց հրաժեշտ տալու Դմիտրի Նալբանդյանին:

Հաջորդ օրը մեր հյուրանոցի համարը բերեցին «վատման» թղթի երկու գլանված թերթ: Բացեցինք: Դմիտրի Նալբանդյանի նատյուրմորտներն էին: Յուրատանջյուրի վրա կար հեղինակի նվիրատվական մակագրությունը...

...Միայն լուսաբացին կարողացա անկողին մտնել: Քունս չէր տանում: Խորհրդածում էի Յուրի Երգնկյանի մասին. հստակորեն ականջիս էր հասնում նրա ձիշը, որ թույլ չտվեց անգամ դիտվածաբար վիրավորել հայ կնոջը:

Ես մտորում էի Յուրի Երգնկյանի մասին, մտածում էի այն մասին, որ շատով իր հոգին գնալու է երկինք: Սակայն. ինչ լավ է, որ Յուրան մեր կողքին է եղել, Երկրում,

ՅՈՒՐԻ ԲԱՌԱՅԵՆ

ԵՐԵՎԱՆ

Ֆիլհարմոնիկի տնօրենությունը լուծարեց արհմիությունը

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի տնօրենության եւ երաժիշտների միջեւ ծագած անհամաձայնությունների շուրջ ծավալվող խոսակցություններին ու մամուլի հրապարակումներին առաջին անգամ արձագանքեց ՀԴՆ-ի տնօրենությունը: Գլխավոր տնօրենի օգնական Ավետիս Բերբերյանը Արմենպրեսի թղթակցին ասաց, որ հունվարի 18-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացել է նվագախմբի երաժիշտների, վարչակազմի եւ մյուս աշխատակիցների ընդհանուր ժողովը, որի ժամանակ քննարկվել են կոլեկտիվում սոցիալական ապահովության ֆոնդ հիմնադրելու եւ, դեռ նոյեմբերին ստեղծված ու «կովախնձոր» դարձած, արհմիութենական կազմակերպությունը լուծարելու հարցերը: Ինչպես ասաց Ա. Բերբերյանը, 228 կողմ եւ 2 ձեռնպահ ձայներով լուծարվել է նվագախմբի, վարչակազմի եւ «Արամ Խաչատրյան» համերգասրահի արհմիութենական կազմակերպությունը: Միաձայն որոշմամբ ստեղծվել է կոլեկտիվի սոցիալական ապահովության ֆոնդը:

Ուսուցիչները դեռեւս աշխատավարձ չեն ստանում

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ՓԱՍՏ: Ադայսօր Հայաստանի բազմաթիվ դպրոցների ուսուցիչները տակավին չեն ստացել դեկտեմբեր-հունվար ամիսների աշխատավարձերը ու կրթության -եւ գիտության նախարարության ֆինանսատնտեսական վարչությունում էլ վճարումների մասին հստակ տեղեկություններ չկան: Ուսուցիչները շնորհակալությամբ են հիշում նոր վարչապետի առաջին խոստումն ու դրան հաջորդած պարտքերի մարումը, ակնկալում նոր խոստում: Հիշյալ վարչության աշխատակիցները նշում են, թե տեղեկություն կարող է տալ դեկավարությունը (փոխնախարար, նախարար): Նշենք, որ նույնն է վիճակը նաեւ բարձրագույն կրթության հաստատություններում: Այստեղ արդեն պրոֆեսորա-դասախոսական կազմից բացի հասանելիք, բայց չստացված գումարներ ունեն նաեւ ուսանողները: Վերջում ավելացնենք, որ պարտատերերը հույսեր են կապում հարկային վերջին տույժերի հետ, որոնց արդյունքում հնարավոր է նոր միջոցների տրամադրում հիշյալ բնագավառին:

«Արվեստ» ամսագրի հատուկ համար՝ Առնո Բաբաջանյանի 75-ամյակին

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆինլանդիայում տպագրվել եւ ամբողջ տպաքանակով Երեւան է բերվել «Արվեստ» ամսագրի հատուկ համարը, որը նվիրված է Առնո Բաբաջանյանի ծննդյան 75-ամյակին: Համարի հրատարակությանը օժանդակել է Մոսկվայում գործող Առնո Բաբաջանյան հիմնադրամը, որի նախագահն է կոմպոզիտորի որդին՝ Արա Բաբաջանյանը: Ինչպես Արմենպրեսի թղթակցին ասաց հիմնադրամի Երեւանի մասնաճյուղի տնօրեն, ամսագրի խմբագրի տեղակալ Ռոբերտ Հակոբյանը, խմբագրությունը գործում է ֆինանսական եւ նաեւ աշխատանքային բավականին բարդ պայմաններում: Ամսագրի տարածքը վերցրել է «Թատրոն» հիմնադրամը, իսկ «Գոյակ» կազմակերպությունը պարզապես խանդել է պատը եւ ներխուժել խմբագրության սենյակները:

Արցախի պետական համալսարանն ունեցավ իր պատմությունը

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 20 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Արցախի համալսարան» անունն է կրում ԼՂՀ պետական համալսարանի պատմությունը, որի անդրանիկ համարը օրերս լույս է տեսել Ստեփանակերտում: Այն առայժմ լույս կտեսնի ամսական մեկ անգամ՝ 500 օրինակ տպաքանակով: Պատմությունը գլխավոր խմբագիրն է համալսարանի գիտարտուղար, դոցենտ Գրիգոր Դանիելյանը:

Էլիզաբեթ Թեյլորի ամանորյա նվերները

Սեփական անձի աստեղայնության գիտակցությունը Էլիզաբեթ Թեյլորին ուղեկցել է մշտապես: Իսկ աստղերին ամեն ինչ թույլատրվում է: Անցած տարիներին սահմանելի Լիզը վարվեց ըստ այդմ նվերներ պատվիրելով հեռախոսով: Զանգահարելով «Բանանային հանրապետություն» էկզոտիկ անունը կրող խանութ, համեստորեն ներկայանալով՝ նա երկու ժամ շարունակ 23 հազար դոլարի նվերներ պատվիրեց իր եւ մտերիմների համար:

Հոլիվուդյան աստղերը՝ թմրամոլության մասին

Նախկին խորհրդային եւ հարակից տարածքների արվեստագետները տենդորեն խուսափում են ի լուր ամենի խոսել իրենց մոլությունների, հատկապես թմրադեղերի հանդեպ կործանարար կրքի մասին: Հոլիվուդյան աստղերը միանգամայն անկաթկանդ են այդ մասին պատմում լրագրողներին: Վերջերս, օրինակ, «բազմահմուտ զինվոր» Ժան Կլոդ Վանդամը տեղեկացրեց, որ կոկաինոմանական բուժարաններից մեկում պատրաստվում է ընդունել բուժման կուրս ընդդեմ թմրադեղերի երից կախվածության: Մամուլին հայտնագործված հայտարարության մեջ նա մասնավորապես նշում է. «Ես գիտեմ, որ երեխաներն ինձանից օրինակ են վերցնում... Ես չեմ կարող հանգիստ ապրել, եթե չվերականգնեմ առողջությունս եւ չհաղթահարեմ այդ վտանգավոր սովորությունը»:

30 տարում ավելի շատ ինֆորմացիա, քան 5 հազարամյակի ընթացքում

1995-ին աշխարհում մոտավորապես 60 մլրդ տողե է ծախսվել հեռախոսով խոսելու, ֆաքս եւ տվյալներ ուղարկելու վրա: 1985-ին այդ ժամանակը կազմել է 15 մլրդ տողե, իսկ 2000-ին թերեւս կլինի 95 մլրդ տողե:

Ամեն օր գրանցվում է մոտ 20 մլն բառ տեխնիկական ինֆորմացիա: Տողերում 1000 բառ կարդացող անձնավորության համար՝ օրական 8 ժամ կարդալով, կրթահատնջի 1.5 ամիս միայն մեկ տարի նյութը կարդալուն, իսկ մյուս ժամանակամիջոցում նա 5.5 տարով հետ կմնա նորություններից (նոր ինֆորմացիայից):

Վերջին 30 տարում ավելի շատ նոր ինֆորմացիա է թողարկվել, քան անցած 5 հազարամյակների ընթացքում: Տարեկան ԱՄՆ-ում հրատարակվում է 9000-ից ավելի գրքերակաղ, իսկ ամբողջ աշխարհում օրական լույս է տեսնում մոտ 1000 գիրք:

«Նյու Յորք թայմսի» շաբաթվա վերջի համարում ավելի շատ ինֆորմացիա է զետեղվում, քան միջին հանգամանքներում իր կյանքի ընթացքում կարող էր ստանալ 17-րդ դարի Անգլիայում:

«ԱՅՍՕՐ»

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՄՈՍԿՎԱ

Օլիմպիականները մեծարվեցին

Ատլանտայի օլիմպիական խաղերի ոուս չեմպիոնների մեծարման ավանդական արարողությանը, որը տեղի ունեցավ հունվարի 17-18-ին Կրեմլի համագումարների պալատում, մասնակցում էին Ռուսաստանի կառավարության անդամներ՝ վարչապետ Չերնոմիրդինի գլխավորությամբ, հյուրեր ԱՊՀ երկրներից եւ արտասահմանից, էստրադայի աստղեր ընդհանուր թվով 1500 մարդ: Հայաստանը ներկայացնում էին մարակույթի, երիտասարդության եւ սպորտի փոխնախարար Ազգային օլիմպիական կոմիտեի (ԱՕԿ) նախագահ Ալեքսան Ավետիսյանը եւ նախարարության սպորտի վարչության պետ Արթուր Գեւորգյանը: Արարողության ժամանակ հանձնվեցին մրցանակներ լավագույն մարզիկ, մարզիչ, բժիշկ, գիտնական եւ այլ անվանումներով: Ի հավելումն օլիմպիական չեմպիոններին կառավարության սահմանած 200 հազարական դոլարի Ռուսաստանի լավագույն մարզիկի տիտղոսը նվաճած լողորդ Ալեքսանդր Պոպովը ստացավ եւս 10 հազար դոլար:

Հայաստանի լավագույն մարզիկ ճանաչված Արմեն Նազարյանը օլիմպիական կոմիտեի սահմանած մրցանակը՝ 4000 դոլար, կստանա հունվարի 29-ին ԱՕԿ-ի գլխավոր ասամբլեայի ժամանակ, որի հիմնական նպատակը, բացի նախորդ տարվա հաշվետվությունից նաեւ առաջիկա 4 տարվա ծրագրի հաստատումն է:

«Մոսկվայում անցկացված միջոցառումը չէր սահմանափակվում միայն ճոխ պարահանդեսով», պատմում է Հայսպորտվարչության պետ Արթուր Գեւորգյանը. «Երկօրյա ծրագրում անցկացվեց հանդիպում օլիմպիական կոմիտեում եւ ֆիզկուլտուրայի, սպորտի եւ զբոսաշրջիկության պետական կոմիտեում եւ հանդիպում Միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Խուան Անտոնիո Սամարանչի հետ, որտեղ այլ հարցերի շարքում քննարկվեց նաեւ 1998 թ. Մոսկվայում համաշխարհային պատանեկան խաղեր անցկացնելու հարցը: Ծրագրվում է հետագայում դրանք վերանվանել օլիմպիական պատանեկան խաղեր եւ անցկացնել օլիմպիական խաղերից մեկ տարի առաջ, նույն քաղաքում, որտեղ եւ օլիմպիական խաղերը: Այս նախաձեռնությունը Մոսկվայի քաղաքապետարանինն է: Վերջնական պայմանները կնշվեն Լուժկովի եւ Սամարանչի հանդիպման ընթացքում:

Պրն Գեւորգյանը նշեց. «Սպորտը Ռուսաստանում դրված է պետական հիմքերի վրա եւ զգացվում էր, որ սպորտի զարգացման մեջ նրանք տեսնում են իրենց վաղվա օրն, առողջ սերունդ դաստիարակելու միակ հնարավորությունը: Վերջերս դասագիրք է հրատարակվել օլիմպիական շարժման պատմության, ռուս օլիմպիականների հաջողությունների մասին, այն պիտի ուսուցանվի բոլոր կրթական հաստատություններում: Ամեն քայլափոխի զգացվում է պետական հոգածությունը սպորտի նկատմամբ»:

Երկօրյա ծրագրում ձեռքբերված պայմանավորվածություններից թերեւս ամենաարժեքավորը հոկտեմբեր ամսին նախատեսված ԱՊՀ երկրների ներկայացուցիչների հավաքն է Լոզանում: ՄՕԿ-ը միջազգային այն եզակի կազմակերպություններից է, որոնք իրենց անդամներից ոչ թե անդամավճար են հավաքում, այլ փորձում են ֆինանսական օգնություն ցույց տալ: Լոզանում քննարկվելու են մարկետինգի հարցեր, որոշվելու է, թե որ ուղղություններով պիտի օգնություն ստանա եւ հովանավորվի ԱՊՀ երկրներից յուրաքանչյուրը:

Ըստ Սամարանչի նախնական հայտարարության ՄՕԿ-ը նախատեսում է ԱՊՀ երկրների համար արտոնյալ պայմաններ ստեղծել, որպես նորանկախ, ինքնուրույն նոր կայացող երկրներ:

Պրն Գեւորգյանը մեծ նշանակություն է տալիս միջազգային կապերին եւ փորձի փոխանակմանը. հատկապես կարեւորում է 1994-ին հիմնադրված ԱՊՀ երկրների ԱՕԿ-ների ասոցիացիայի դերը, որը հնարավորություն է տվեց շարունակել նախկինում գոյություն ունեցած կապերը եւ փոխհամագործակցությունը: «Այս կառույցը շփման լայն եզրեր է բացում պետությունների համար ապահովելով ուսումնամարզական համատեղ հավաքներ, այլ պետությունների մարզադահլիճների եւ բազաների արդյունավետ հաճատեղ օգտագործում (ընդ որում կառույցի ներսում հնարավոր են սեղարաս պայմանագրեր)»: Մասնավորապես նշվեց Ծաղկաձորի սպորտային բազայի համատեղ օգտագործման նշանակությունը: Շատ երկրներ, նաեւ Ռուսաստանը, այս առաջարկին դրական են վերաբերվում:

Միջազգային շփումները տալիս են նաեւ պետությունների պետական սպորտային կառույցները համեմատելու հնարավորություն: Մասնավորապես պրն Գեւորգյանը նշեց. «Համեմատելով մոտ 50 երկրների փորձը եկա այն համոզման, որ սպորտի համար առավելագույն զարգացման հնարավորություն է տալիս ֆիզկուլտուրայի եւ պրոֆեսիոնալ սպորտի տարանջատումը, որտեղ որում պետությունը պիտի զբաղվի իր բնակիչների ֆիզիկական պատրաստման հարցերով, իսկ «մեծ նվաճումների սպորտի» խնդիրները պիտի լուծի հասարակական կազմակերպությունը՝ օլիմպիական կոմիտեն, որը ճանաչված է միջազգային կազմակերպությունների կողմից»:

Ռ. ԱԶԻԶՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ՄՐՑԱՇԱՐ

Ֆուտբոլը մասնագիտություններ չի ճանաչում

Մարզիկների, մարզական կազմակերպիչների, օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մարզադպրոցների ղեկավարների հավաքականը դարձավ մինի ֆուտբոլի ամանորյա մրցաշարի հաղթող: Աստղաշեսը կազմակերպել էին Ռուսաստանի մարզական լրագրողների ֆեդերացիան եւ Մոսկվայի քաղաքապետարանի ֆիզկուլտուրա-մարզական միությունը: Եզրափակիչում, որը կայացավ «Չերտանովոյի» ձմեռային դահլիճում, տանտերերը հաղթեցին երկրի չեմպիոն «Դինային»:

Դրա համար արժե վազել

ԱՊ գործակալությունը Մոնտե Կարլոյից (Մոնակո) հայտնում է, որ ամռանը Աբենֆում կայանալիք թեթեւ atլետիկայի աշխարհի առաջնության հաղթողները որպես մրցանակ կստանան 60 հազարական ամերիկյան դոլար: Գումարները, իհարկե, ֆանտաստիկ են: Օրինակ, ամերիկացի առագավազորդ Մայքլ Ջոնսոնը կարող է ստանալ 120 հազար դոլար, եթե Հունաստանում կրկնի Ատլանտայի օլիմպիական խաղերում ցույց տված բարձր արդյունքները, շահելով 200 մ եւ 400 մ մրցավազքերը: ԻԱԱՖ-ը որոշել է նաեւ խոշոր գումարով պարգեւատրել մարտին Փարիզում կայանալիք ծածկած տրահում աշխարհի առաջնության չեմպիոններին: Այսպես, ոսկե մրցանակակիրները կստանան 50 հազար դոլար, արծաթե մեդալակիրները՝ 20 հազար, իսկ բրոնզե՝ 10 հազար: Առանց պարգեւների չեն մնա եւ աշխարհի գավաթի խաղարկություններում, կիսաեռավազքերում, փոխանցումավազքերում եւ մրցաշրջանի մյուս խոշոր մեկնարկներում առավել այլի ընկած մարզիկները:

Ստեղծվել է վրացական ֆուտբոլի օգնության հիմնադրամ

Թբիլիսիում ստեղծվել է վրացական ֆուտբոլի օգնության միջազգային բարեգործական հիմնադրամ: Դրա նախագահ է ընտրվել անցյալի (50-ական թվականների) վրաց հայտնի ֆուտբոլիստ Գայոզ Ջեջելավան: Հիմնադրամի նպատակն է օգնել երկրի ֆուտբոլային ակումբներին, նյութական եւ տնտեսական դժվարություններ ունեցող վետերաններին: Հիմնադրամը դրամական հատուկ պարգեւ է սահմանել հանրապետության լավագույն ֆուտբոլիստի համար: Արդեն առաջին գումարները եղել փոխանցվել հիմնադրամին: Դրանք ստացվել են անհատ անձանցից, երկրպագուներից, անցյալի եւ ներկայիս հայտնի ֆուտբոլիստներից:

Ինչի՞ մասին է երազում Ավելանժը

Ռիո դե Ժանեյրոյից ստացված ԱՊ գործակալության հաղորդագրությունում նշվում է, որ ՖԻՖԱ-ի նախագահ Ժոաո Ավելանժը երազում է ցուցադրական ֆուտբոլային մրցամարտ անցկացնել Իսրայելի եւ Պաղեստինի հավաքականների միջեւ: «Ես երջանիկ կլինեի, եթե նման հանդիպումը իրականություն դառնար: Դա կլիներ ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնում իմ գործունեության գագաթնակետը», ասել է Ավելանժը: Նա հայտնել է նաեւ, որ իսրայելցի եւ պաղեստինցի ֆուտբոլիստների միջեւ խաղը, հավանաբար, կկայանա այս տարվա սեպտեմբերին, Նյու Յորքում:

ՄԻՑԱՊԵՊ

Օլմեսան հեռացվեց, իսկ ո՞ւր է հարսնացուն

Աննախադեպ որոշում է ընդունել ֆրանսիական «Լիոն» ակումբի ղեկավարությունը: Թիմի դարպասապահ եւ ավագ Պասկալ Օլմեսան հեռացվել է ակումբից, «սիրո հողի» վրա իր ակումբակից Ժան-Լյուկ Սասյուսի հետ ծեծկռտուք սարքելու համար:

Միջադեպը տեղի է ունեցել դեռ դեկտեմբերի 20-ին, «Նանսի» հետ հանդիպումից հետո: Լքելով խաղադաշտը եւ ուղղվելով հանդերձարան, Օլմեսան նկատել է երկրորդ խաղակետում փոխարինված Սասյուսին, որը խաղաղ զրուցում էր Օլմեսայի հարսնացուի հետ: Թիմի մյուս ֆուտբոլիստների խոսքերով, վաղուց միեւնույն անձնավորությանը սիրահետող Օլմեսայի եւ Սասյուսի միջեւ մի անգամ չէ, որ վեճեր են ծագել, սակայն դրանք երբեք չեն ավարտվել կռվով: Բայց այս անգամ, նաեւ իր թիմի պարտության պատճառով զայրացած լինելով, Օլմեսան հավանաբար չի կարողացել զսպել կրքերը եւ առանց ավելորդ բառերի, երկու ուժեղ հարվածներով նոկաուտի է ենթարկել «մրցակցին»: Արդյունքում, Սասյուսը քթարմատի կոտրվածքով եւ ուղեղի ցնցումով հասցվել է հիվանդանոց, իսկ նորահայտ Օրելլոն զրկվել է ակումբում հանդես գալու իրավունքից «մինչեւ նոր որոշման ընդունումը...»:

35-ամյա Օլմեսան համարվում է ֆրանսիական ֆուտբոլի ամենաոչխիտիկ ներկայացուցիչը: Ծագումով կորսիկացի, ինչով էլ մեծամասամբ բացատրվում է նրա խանդը եւ տարբերությունը. Պասկալը միշտ հրաժարել է ինչպես մարզական լրագրողներին, որոնք հիանում էին դեռի գնդակը նրա անհերեւակայելի նեռումներով, այնպես էլ թղթակիցներին, որոնք լուսաբանում էին նրա կյանքի մյուս կողմերը: Երկու անգամ Օլմեսայի անունը հայտնվել է Ֆրեսկան խոնինկայի էջերում, մեկ անգամ կապված մոտոցիկլետ փախցնելու հետ, իսկ մյուս անգամ դրամակեղծների գործի քննության կապակցությամբ, որի ընթացքում պարզվել է, որ Օլմեսայի տարօրինակ «բարեկամները» զբաղվել են բարձրարակ 200 ֆրանկանոց թղթադրամների պատրաստմամբ:

Դանակների մեծ հավաքածու ունեցող եւ որսորդության կրքոտ սիրահար Օլմեսան նաեւ մեծ երաժշտական տաղանդ ունի: Վերջին տարիներին նա ձայնագրել է մի քանի սկավառակներ իր մենահամերգներով եւ բազմաթիվ երաժշտական շոուների ցանկալի հյուրն է դարձել: Ինչ վերաբերում է ֆուտբոլային կենսագրությանը, ապա 471 խաղ անցկացնելով ազգային առաջնություններում նա դարձել է ֆրանսիական ֆուտբոլի ռեկորդակիրներից մեկը: Երկու անգամ հանդես գալով «Մարսելի» կազմում, Օլմեսան դարձել է երկրի չեմպիոն: Իմը՝ Օլմեսան հրաժարվել է մանրամասն մեկնաբանել իր ակումբի ղեկավարության որոշումը, հայտարարելով միայն, որ մտադիր է դատարանի միջոցով պահանջել աշխատանքից ազատման ժամանակ ընդունված փոխհատուցման վճարումը:

Ինչպես երեւում է, ֆիզ կոտրելը ֆրանսիական ֆուտբոլում տխուր ավանդույթ է դառնում: Վերջին երկու տարիների ընթացքում սա նմանատիպ երրորդ դեպքն է:

ԻՍՊԱՆԻԱ

Ասա լա վիստա, դոն Միգել

Միգել Ինդուրայնը հեռանում է մեծ սպորտից

Ո՞վ կփորձի վիճել, որ նա մոլորակի լավագույն հեծանվաարշավորդն է: Եվ անգերազանցելի: Իսպանացի Միգել Ինդուրայնը միակն է, ում հաջողվել է շահել «Տուր դե Ֆրանսը» հինգ անգամ անընդմեջ:

Վերջերս դոն Միգելն իր հարազատ Պամպլոնա նահանգի հյուրանոցներից մեկում հավաքեց լրագրողներին: Նա հայտարարեց իր գնալու մասին: «Ես էպոս ժամանակ եմ անցկացրել արհեստավարժ հեծանվասպորտում: Երկար եմ մտածել այս որոշման մասին եւ զգում եմ, որ ճիշտ եմ վարվում: Այդպես լավ կլինի եւ իմ, եւ ընտանիքիս համար», ասել է նա:

Միգել Ինդուրայնը նշել է, որ թեեւ ինքը չհաղթեց «Տուր դե Ֆրանս-96»-ում, սակայն իր մարզական կարիերայից լիովին բավարարված է: Չէ որ Ատլանտայի օլիմպիական խաղերում նա հաղթեց անքաս մեկնարկով անհատական մրցավազքում:

Պամպլոնցիների ամբոխը ողջունում էր իր կուռքին: Նա լքեց հյուրանոցը հսկայական ծաղկեփնջով ձեռքերում, իր հայրենի Վիլլավա գյուղի խորհրդանիշով եւ մրցավազքի պահին իր լուսանկարով: Մրցուղին անցնում էր Մայորիկա տեղանքով, որ ադրում են հեծանվորդի ծնողները: Հիշենք.

1985 թիվ: Ինդուրայնը մտնում է արհեստավարժ սպորտ, հանդես գալով «Ռեյնոլդս» թիմի կազմում: «Վուելտա» հեծանվաարշավում վերջնագիծը հասնում է 84-րդը: Չորրորդ փուլից հետո դուրս է մնում «Տուր դե Ֆրանսից»:

1986 թիվ: Շահում է երկու արհեստավարժ հեծանվաարշավներ: «Վուելտայում» ճանաչվում է 92-րդը, իսկ «Տուրում...» հասնում է մինչեւ 13-րդ փուլ:

1987 թիվ: Դառնում է «Տուր Վալլեի» եւ «Նավարրայի մեծ մրցանակի» խաղարկության հաղթող: Առաջին անգամ «Տուրի...» վերջնագիծը հասնում է 97-րդը:

1988 թիվ: Որակազրկվում է «Վուելտայի» 17-րդ փուլից հետո:

1990 թիվ: Փոխադրվում է «Բենետոն» թիմ: Հաղթում է «Տուր դե Ֆրանսի» 16 փուլերում եւ արդյունքում դառնում է 10-րդը:

1991 թիվ: Հաղթում է «Տուր դե Ֆրանսում»:

1992 թիվ: Դառնում է «Ջիրո դ'Իտալիայի» հաղթող: Իր հաշվին է գրանցում հերթական «Տուրը...»:

Այնուհետեւ հետեւում են բազմաթիվ հաղթանակներ եւ մեկ «տգեղ» պատմություն: Նրա – կենսաարվակում հայտնաբերվում է սալբուտամոլ արգելված դեղամիջոցը: Սակայն Ինդուրայնին անմեղ ճանաչեցին, քանզի դեղամիջոցը նա օգտագործել էր ոչ դիտավորյալ, որպես ասթմայի դեմ բուժամիջոց:

Կրենք, որ «Տուր դե Ֆրանսի» հինգակի հաղթողներ են դարձել լեգենդար էդդի Մերկսը, ժակ Անկետիլը եւ Բեռնար Ինոն: Սակայն նրանցից ոչ մեկին չի հաջողվել հեղինակավոր մրցավազքը շահել հինգ անգամ անընդմեջ:

Ավարտվեց Ինդուրայնի պայմանագիրը «Բանեսպոյի» հետ եւ նրան իսկույն իր ծառայություններն առաջարկեց «ՕՆՏԵ»-ն: Բայց նա նախընտրեց գնալ: Ցտեսությո՞ւն, դոն Միգել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ԱՄՆ

Նախագահ Բիլ Քլինթոնի ժողովրդականությունը հասել է գագաթնակետին

ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի ժողովրդականությունը ներկա պահին հասել է իր ամենաբարձր մակարդակին, որի հիմքը դրվել էր նրա կառավարման առաջին ժամկետի սկզբից: Պետության ղեկավարի երկրորդ քառամյակով պաշտոնն ստանձնելու առթիվ այստիսի յուրօրինակ էվեր է բերել «Նյուզուիք» հանդեսի անցկացրած հասարակական կարծիքի հարցումը:

Հարցման ենթարկվածների 57 տոկոսի համոզմամբ, նրանց դուր է գալիս թե Քլինթոնն ինչպես է կատարում իր նախագահական պարտականությունները: Համանման արդյունք էր գրանցվել միայն մեկ անգամ 1993 թվականի մարտին: Հակառակ կարծիքի է ամերիկացիների 34 տոկոսը, իսկ 9 տոկոսն այդպես էլ չի որոշել սեփական դիրքորոշումն այդ հարցում:

Սակայն պաշտոնական չափանիշներով Քլինթոնի ծառայություններ առանձին հարցման արդյունքներ հազիվ թե կարելի է հաճելի համարել: Մեծամասնությունը (49 տոկոս) ասել է, որ հարյուր տարի անց ամերիկյան բոլոր նախագահների վարկանիշների ցուցակում պետության ներկայիս ղեկավարն ավելի շուտ տեղ կգրավի վերջին, քան առաջին տասնյակում: Մյուս կողմից 37 տոկոսը միանգամայն հակառակ կանխատեսումն է արել:

Մինչդեռ նման հարցն ակնհայտորեն կաղված էր 1996 թվականի վերջերին հրապարակված մի անսովոր հետազոտության հետ, որն անց էր կացրել «Նյու Յորք թայմս» թերթը: վերջինս դիմել էր երկրի 32 առաջատար պատմաբանների՝ նրանց առաջարկելով գնահատական տալ նախագահի գործունեությանը: Ու թեև փորձագետների մեծամասնությունը գտել էր, որ դեռևս վաղ է դատել Քլինթոնի գործունեության մասին, այդուհանդերձ, Սպիտակ տան ներկայիս ղեկավարի ցուցանիշը հանվել էր «միջակ»: Այդ ցուցակում Քլինթոնը հայտնվել էր 28-րդ տեղում, առաջանցելով 11 նախագահներից: Իսկ իրենց պարտականություններն ամենից լավ կատարել էին Ջորջ Վաշինգտոնը, Աբրահամ Լինքոլնը եւ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը՝ «մեծ» նախագահների բարձրագույն խումբը: «Նշանավոր էին» Թոմաս Ջեֆերսոնը, Էնդրյու Ջեքսոնը, Ջեյմս Նոքս Փոլքը, Թեոդոր Ռուզվելտը, Վուդրո Վիլսոնը եւ Հարի Թրումենը: «Չախողվածների» «կարգի մեջ են հայտնվել Ֆրանկլին Փիրսը, Ջեյմս Բյուքենենը, Էնդրյու Ջոնսոնը, Ուլիս Սիմփսոն Գրանտը, Ուորեն Հարդինգը, Հերբերտ Հուվերը եւ Ռիչարդ Նիքսոնը:

Այդուհանդերձ, ինչպես կարծում է հայտնի պատմաբան Արթուր Շլեզինգերը, որը ղեկավարում էր հետազոտության անցկացումը, ինչպես նաեւ ամերիկացիների 37 տոկոսը, «կառավարման երկրորդ ժամկետը Քլինթոնին կարելիություն է ընձեռում» հասնելու «նշանավորի» մակարդակի կամ նույնիսկ դառնալու «մեծ»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՄԱՌՈՏ

Ռաուֆ Դենքթաշը 3-օրյա այցով ժամանեց Թուրքիա

20 ՀՈՒՆՎԱՐ. BBC: Թուրք կիպրոսցիների առաջնորդ Ռաուֆ Դենքթաշը սկսեց իր եռօրյա այցը Թուրքիա մոտ տասն տարի ավելի տեւ հատուցեալ Կիպրոսի հետ: Նրա ուղեւորությունը հակազդեցություն է հույն կիպրոսցիների Ռուսաստանից զենիթային հրթիռներ գնելու որոշմանը: Ժամանելով Թուրքիա Ռաուֆ Դենքթաշը հայտարարեց, թե այդ բանակցությունները պետք է ցուցադրեն թուրք կիպրոսցիներին լիակատար աջակցություն ցուցադրելը շարունակելու Թուրքիայի մատուցությանը: Սպասվում է, որ Թուրքիայի նախագահ Դեմիրելը եւ Դենքթաշը հանդես կգան խիստ արտահայտություններ պարունակող համատեղ հռչակագրով Կիպրոսի հյուսիսային մասում ուժերի ավելի մեծ ինտեգրացիայի մասին: Ինչ-որ պահի 2 կողմն էլ ծրագրել էին համատեղ ռազմական հենակետի ստեղծման մասին համաձայնագիր կնքել, սակայն այդ մտադրությունից որոշվեց հրաժարվել, որովհետեւ իրադրությունն էլ ավելի չբիկանա: Դրա փոխարեն շեշտը կդրվի Կիպրոսում գտնվող բուրքական 30 հազարանոց զորքի եւ տեղի պաշտպանական ուժերի ավելի սերտ կապերի, համագործակցության, ինչպես նաեւ տնտեսական կապերի ամրապնդման վրա:

Կոզլոդույի ռեակտորը 7 տարի հուսալի կմնա՞

20 ՀՈՒՆՎԱՐ. BBC. Ինչպես հաղորդեց բուլղարական ռադիոն, նորից է գործարկվել միջուկային ռեակտորը, որի աշխատանքի անվտանգությունը մտահոգություններ էր առաջացրել: Կիրակի օրը սկսեց աշխատել Դանուբի վրա գտնվող Կոզլոդույ ատոմակայանի 6 ռեակտորներից ամենահինը, որն այժմ հասցվել է լրիվ հզորության: Վերջին անգամ այն անջատել էին անցյալ տարվա մայիսին՝ երկյուղելով, թե դեպքերից մեկի մեսաղը դարձել է դյուրաբեկ: Եվրախորհրդարանի մի քանի երկրներ մտահոգություն հայտնեցին այդ ռեակտորի կառուցությամբ: Ինչպես հաղորդեց բուլղարական ռադիոն, տվյալ պահին փորձարկումները ցույց տվեցին, որ ռեակտորը հուսալի է եւ կարող է եւս 7 տարի աշխատել:

Օտարերկրյա դիվանագետները՝ Մոսկվայի ճանապարհային ոստիկանության թիրախ

ՄՈՍԿՎԱ. 20 ՀՈՒՆՎԱՐ. ՆՏ. Մոսկվայի ճանապարհային ոստիկանությունը անցյալ շաբաթ իրականացվող հատուկ գործողության ժամանակ նշանի տակ էր առել օտարերկրյա դիվանագետներին, ինչը թերթերից մեկի բնորոշմամբ արձագանք էր այս ամսվա սկզբին Նյու Յորքի ոստիկանության կողմից մեկ ռուս եւ մեկ բելառուս դիվանագետների ձերբակալությանը: Մոսկովյան «Սեգոդնյա» օրաթերթի համաձայն, «Օտարերկրացի» անվանումը կրող եւ չորեքշաբթի-հինգշաբթի օրերին իրականացված գործողության ժամանակ փողոցային երթեւեկության կանոնների տարբեր խախտումների համար ոստիկանությունը գրել է շուրջ 200 ակտ: Դիվանագետները օժտված են անձեռնմխելիության իրավունքով եւ դատական հետադիմման ենթակա չեն: Ռուսաստանը Նյու Յորքի ոստիկանությանը բնաղդատել էր ռուս եւ բելառուս դիվանագետներին կալանավորելու համար, երբ վերջիններս ավտոմեքենաներ կանգնեցրել են բենզակայանին շատ մոտ եւ վնասի բռնվել նրա ծառայողների հետ:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 1-ին հարկում, Դեմիրճյան 17 շենք:

Հեռախոսներ՝ 58-18-41, 52-30-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյականոց բնակարան, (ընդհ. մակ.՝ 95 քմ, բնակ. մակ.՝ 65 քմ) քարե շենքի 4-րդ հարկում: Ունի վերնահարկ (45 քմ): Քն. ընդհ. մակ.՝ 140 հազ է: Գտնվում է Աջափնյակում՝ Հանր. հիվանդանոցի մոտ:

Հեռ.՝ 581841, 342586

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան, պարտերեւանոց, Վերայական փողոցում:

ՀԵՌԱԽՈՍՆԵՐ՝ 25-11-87, 58-18-41

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան, Դեմիրճյան 40 շենք, բն. 20:

Հեռախոս՝ 52-67-28

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աճուրդով վաճառվում է Կոտայքի մարզի (նախկին Նաիրիի շրջան) Նոր Երզնկա գյուղում գտնվող անշարժ նաղահական համալիր՝ 1087 քմ ընդհանուր տարածքով, կայուն ջրաղ եւ էլեկտրամատակարարմամբ, բաղկացած երկհարկանի անասնագոմից եւ թռչնանոցից, պահեստային շինությունից եւ ամբարից: Մեկնարկային գինը՝ 25.000 դոլարին համարժեք դրամ:

Աճուրդը կկայանա ս/թ հունվարի 24-ին, ժամը 10-ին Նոր Երզնկայի մշակույթի տանը: Մասնակցության կամ հավելյալ տեղեկությունների համար դիմել Երեւանում՝ 52-05-89, 58-43-72, կամ Եղվարդում՝ 2-14-82, 2-14-97, ժողդատարանի դատական կատարածուին:

Avant Garde Boutique

ԲՈՒՏԻԿ

Խանութն առաջարկում է կանացի և տղամարդու հագուստի և ախեսուարների հարուստ տեսակների

GIORGIO ARMANI Իտալիա
LAURENT CHARLES Ֆրանսիա
STEFANO Ֆրանսիա
DIESEL Իտալիա
LONGINES Շվեյցարիա
DUPONT Ֆրանսիա

ԱՄԵՆԱԾԱԾՐ ԳՆԵՐԸ ՔԱՂԱՔՈՒՄ

Սպասում ենք Ձեզ: Ամեն օր ժամը 10-ից 19-ը հեպեպյայ հասցեով.

Մ. Բաղրամյան պող. 58, հեռ. 27-29-03

ՍԱԹԻ-ՀԱՅԱՍՏԱՆ
SATI-ARMENIA

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ
երկրագնդի ցանկացած երկրից
Հայաստան եւ հակառակ
ուղղությամբ

■ Մասնավորապես Իրան եւ Իրանի տարանցիկ ճանապարհներով Միացյալ Արաբական Էմիրություններ, Սիրիա, Թուրքիա, Թուրքմենստան, Տաջիկստան, Ղազախստան, Հնդկաստան եւ Չինաստան:
■ Արտահանման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատրաստում:

ՍԱԹԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Հասցեն՝ Երեւան, Մեսրոպ Մաշտոցի պող. 21
Հեռ. 53-11-20, 53-10-22
AT&T հեռ./ֆաքս 151383

«ՍԱՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ. 589167, 581351

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց»-կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23

«ՍԱՐԳԱՐԱՊԱՏ» ՍՊԸ

առաջարկում է ձեզ 7, 14 եւ 21 օրվա շրջագայություն

ԲԵՅՐՈՒԹ

Կազմակերպում է այցելություններ Լիբանանի տեսարժան վայրերը եւ հաճելի ժամանց:

Ուղեգրի արժեքը 400 դոլարին համարժեք դրամ:
Դիմել «Էրեբունի» հյուրանոց, II մասնաճյուղ, 327 սենյակ:
Հեռ. 56-05-82

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատճեր 498. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 20.01.1997. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@